Azg Ազգ

27 ԱՊՐԻԼ 2011 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 74 (4693)

ISSN: 1829-1651

Ծաղկավաճառների եւ անկիրթների ագրեսիա երեկոյան Ծիծեռնակաբերդում

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Ծիծեռնակաբերդ պետք է բարձրանալ առանձին, ինքդ քեզ հետ, սրբավայրն է թելադրում-հուշում, եւ՝ լռությամբ: Ապրիլի 24-ը, սակայն տարբեր է եւ չի կարող ենթարկվել սրան: Այդ օրը մարդկանց հոսքերն անընդհատ են շարժվում դեպի վեր: Մենակություն հնարավոր չէ ունենալ, բացառած լռություն նույնպես չի լինի, բայց գոնե հուշահամալիրին մոտեցող ճանապարհի հատվածում պարտադիր է:

Զանգվածային գիտակցության վրա հեռուստատեսության ազդեցության հսկայական դերը, ակնհայտ է: Եվ բավականին ակտիվացած հեռուստաընկերները Հայոց ցեղասպանությանը վերաբերող, հատկապես վերջին տարիներին, թվում էր ավելի գիտակից վերաբերմունք պետք է որ մարդկանց ներարկեին: Գոնե կիմանան՝ ուր են գնում:

Առաջին անգամ Ծիծեռնակաբերդ ուշ ժամի բարձրացա, այս ապրիլի 24-ին: Օրն ավարտին էր մոտենում, ու զարմանալի էր այդքան մարդաբանությունը: Լավ էր՝ չլիներ: Ցավալի էր Երեւանի ամենաթանկ ու սիրելի վայրն այդպես վիրավորված, թող ներվի ասելու, անարգված տեսնել: Ճանապարհի ամենասկզբնամասում ծաղկավաճառների՝ արդեն թափուր տեղերում, ամբողջ շրջակայքով մեկ աղբի մնացորդներ էին շաղ տված: (Այդ էր մնացել, ամեն մեկը հավաքեր-մաքրեր իր զբաղեցրած տեղը): Ծաղկավաճառների անհամեմատ նոսրացած խմբերը, մարդկանց երեկոյան հոսքից անտարբերելի ոգեւորված, արագ կողմնորոշվեցին գործի մեջ:

Տես էջ 2

Պաշտոնական Թուրքիան սպառնում է Ժնեւին

Պատճառը Հայոց ցեղասպանության հուշարձանի կառուցումն է

Շվեյցարական 20 Minuten online տեղեկատուն հաղորդում է, թե պաշտոնական Թուրքիան եւ շվեյցարաբնակ թուրքերը ուժերը միացրել են Ժնեւում Հայոց ցեղասպանության հուշարձանի կառուցումը կասեցնելու նպատակով: Թուրքական միությունները կոչ են անում Ժնեւի թուրքերին դիմագրավել հուշարձանի կառուցումը՝ շվեյցարացի պատասխանատու քաղաքական գործիչների առջեւ այլեւս չվերընտրելու պայման դնելով, իսկ դաշնային արտգործնախարարությանը Թուրքիան եւ թուրքական միությունները սպառնում են հուշարձանը կառուցելու պարագայում հայ-թուրքական հակամարտության մեջ Շվեյցարիայի միջնորդական դերը ավարտված համարել:

«**Ազգի**» ընթերցողներին ժամանակին ծանուցել էինք, թե մարտի 29-ին ֆրանսահայ արվեստագետ Մելիք Օհանյանի «Հիշողության լաբիրինթներ» անվանյալ նախագիծն է հաղթող ճանաչվել Ժնեւի Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանի համար հայտարարված միջազգային մրցույթում: Հուշարձանի հանդիսավոր բացումը պիտի կայանա 2013-ի ապրիլին: Ժնեւի քաղաքային խորհրդարանը հուշարձանի մասին որոշում էր կայացրել 2008-ի մայիսին: Քաղաքը 100 000, իսկ հայ համայնքը 400 000 շվ. ֆրանկ է տրամադրում հուշարձանի տեղադրման համար:

20 Minuten online-ը լուրի հաղորդմանը զուգահեռ տեղադրել է նաեւ Հայոց ցեղասպանության մասին քարտեզներով, լուսանկարներով, վերջին օրերի լրատվությամբ հագեցած հրապարակումների ծավալուն մի շարք:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Euronews-ը թուրքերի թեւարկման տակ

Միջազգային լրատվամիջոցներից հայ հանրությանը ավելի մատչելի Euronews-ն արդեն ձեւավորել է կայուն լսարան՝ մարդկանց մի ստվար շերտ՝ ամենայն մանրամասնությամբ հետեւող աշխարհի որեւէ անկյունում հեռարձակվող իրադարձություններին: Եվ եթե անցյալ տարի հեռուստատեսությամբ Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցի օրը անդրադարձ արվեց 1,5 մլն նահատակված հայերի ոգեկոչման արարողությանը՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում, ապա այս տարի XX դարի առաջին ցեղասպանության մասին ակնարկ իսկ չեղավ, այն պարագայում, երբ որեւէ այլ՝ ամենաանսպասելի իրադարձություն անգամ կարող է հայտնվել հեռուստաէկրանին, այն էլ՝ ոչ մեկ անգամ: Սա առնվազն անարգանք է 1915 թ. թուրքերի կողմից սպանված միլիոնավոր անմեղ հայերի հիշատակին եւ ապրողների հիշողության ցավի հանդեպ վիրավորանք: Թեեւ անսպասելի կամ արտառոց էլ չի կարելի երեւույթը դիտել, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Euronews-ի 15,2 տոկոս բաժնետոմսերը 2010 թվականին գնեց Թուրքիան: Մ. Ք.

Անկարան դավում է Սիրիայի դեմ

Լիբանանի մայրաքաղաք Բեյրութից մեր ստացած տեղեկությունների համաձայն, սիրիական իշխանություններին դավադրող արտաքին ուժերի առաջին քարտուղարն է Թուրքիան: Վերջին 4-5 տարիներին տարածաշրջանում որպես Սիրիայի «միակ իսկական բարեկամ» հանդես եկող այս պետությունը, ըստ սիրիական հարցերին լավատեղյակ մեր աղբյուրի, վերջին շաբաթներին զենք ու զինամթերք է հայթայթում Սիրիայի արտաքսական մուսուլման խռովարարներին: Որպես հավելյալ ապացույց մեր աղբյուրը տեղեկացրեց նաեւ, որ Սիրիայի հետ սահմանամերձ շրջաններից մեկում Անկարան վերջերս հաստատել է ռադիոկայան, որ արաբերեն լեզվով հաղորդումներ է տալիս երկրում տիրող իրավիճակի վերաբերյալ եւ ըմբոստությունը գրգռող հաղորդումներ:

Պատասխանելով Սիրիայի 2-րդ՝ ամենահայաբնակ քաղաք Հալեպում տիրող իրավիճակի մասին «Ազգի» հարցին՝ լիբանանահայ մեր լրատուն ասաց, որ այդ քաղաքում լարված, բայց անցնցում իրավիճակ է տիրում: Այնուհետեւ բացատրելով նա տեղեկացրեց, որ Հալեպը, ի տարբերությունը սիրիական այլ քաղաքների, բացահայտորեն հակասալաֆական դիրքորոշում ունի, այսինքն՝ դեմ է կրոնական մոլեռանդությանը, որը հատուկ է սալաֆիներին, որոնք համարվում են արաբական թալիբներ: Այլ խոսքով՝ նրանք դավանում են Շարիաթի օրենքները եւ քաղաքական որեւէ այլ օրենք կամ սահմանադրություն չեն ընդունում:

Գիտաժողով Երուսաղեմում ապրիլի 28-ին

Հարյուրհազարավոր բռնագաղթածների թատերաբեմ հանդիսացած Դեր Զորը դարձյալ զանգվածային մամուլի լրատվության ուշադրության կենտրոնում է լինելու, գրում է Երուսաղեմից **Արթուր Հակոբյանը** «Արմինյն միրոր սփեթթեյթր» շաբաթաթերթում: Երուսաղեմի Եբրայական համալսարանի հայկական ուսումնասիրությունների ծրագրի կազմակերպությամբ ապրիլի 28-ին Երուսաղեմում գիտաժողով է տեղի ունենալու, որի ընթացքում ելույթներով հանդես են գալու պրոֆ. Իսրայել Չառնին եւ պրոֆ. Էլիհու Ռիխտերը: Հնչելու են նաեւ օրվա խորհրդին համապատասխան երաժշտություն եւ արտասանություն:

Այդ առթիվ հրապարակված հայտարարության մեջ ասված է, որ 1915 թվի ապրիլյան ցեղասպանության ժամանակ մեկից մեկուկես միլիոն հայ տղամարդիկ, կանայք եւ երեխաներ կոտորվեցին կազմակերպված սպանությունների եւ դեպի սիրիական անապատները բռնագաղթի միջոցով:

Նախկին արծվաբենցիները բողոքում են

Ժամանակին Ադրբեջանի վերահսկողության ներքո անցած Արծվաբեն գյուղի նախկին բնակիչները երեկ բողոքի ցույց էին կազմակերպել նախ նախագահի նստավայրի, ապա կառավարության շենքի մոտ՝ իշխանություններից պահանջելով լուծել իրենց բնակարանների խնդիրը: Նրանց խոսքով՝ 20 տարի արդեն ապրում են հարակից գյուղերի՝ մալականների եւ թուրքերի՝ 1800-ականներին կառուցած բնակարաններում, զուրկ են կենցաղային տարրական պայմաններից: Արծվաբենի անկումից հետո 482 ընտանիք մնաց անտուն: Երեկ նրանց ընդունեց փոխվարչապետ Արմեն Գեւորգյանը, սակայն հանդիպումից դուրս եկած արծվաբենցիները դժգոհ էին, քանի որ նրանց ասվել էր այս տարի կառուցվելիք ընդամենը 14 բնակարանի մասին: Արծվաբենցիները բողոքը շարունակելու են:

Անիրազեկությո՞ւն, թե՞ շրջանցում

2010-ի «**Ազգի**» ապրիլ 24-յան «Մշակույթ-Հավելվածի» «Տոն նահատակաց. Երվանդ Օսյան, Վրթանես Փափազյան եւ Գեւորգ Ե կաթողիկոս» վերտառությամբ առաջնորդող հրապարակումը, Պոլսի «Ժամանակ» օրաթերթում Երվանդ Օսյանի՝ 1915-ի անմեղ զոհերի հիշատակի հատուկ օր ընդունելու անհրաժեշտության մասին առաջարկի վերաստղությունն էր, ինչը խմբագրությանն էր տրամադրել Ազգային գրադարանի մատենագետ Սուսաննա Գալստյանը: Ապա Մայր աթոռի հոգեւոր ճեմարանի դասախոս տեր Եղիշեն մեզ տրամադրեց տեղեկություն առ այն, որ ապրիլի 24-ը որպես Նահատակաց օր ընդունելու առաջարկն արել է Վրթանես Փափազյանը՝ համապատասխան նամակով դիմելով Գեւորգ Ե կաթողիկոսին, ի հիշատակ 1915-ի այդ օրը Պոլսում ձերբակալված, ապա եւ սպանված 760 հայ մտավորականների:

Մեր հրապարակումից անցել է ուղիղ մեկ տարի եւ ահա այս ապրիլի 24-ին «Հայլուրի» թողարկման ժամանակ հաղորդավարի մեկնաբանական տեսքը այս իրողության որպես առաջին բացահայտող ներկայացնում է ծրագրի՝ այլապես շնորհալի թղթակից, Աբրահամ Գասպարյանին՝ Ազգային արխիվի տնօրենի հետ զրուցելիս: Իսկ ո՞ւր մնաց այս մասին հայաստանյան մամուլում առաջին իրազեկողը՝ «**Ազգ**» օրաթերթը:

Մ. Ք.

Օբաման, Կարեն Անդրեասյանը եւ «ջրբաժանը»

ՄԱՔԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մարդու իրավունքների պաշտպանը նախորդ օրն առաջարկել էր միջնորդ դառնալ ՀԱԿ-ի ու կոալիցիայի միջեւ: Մի կողմից սա կարող է թվալ լավ նախաձեռնություն, բարի ցանկություն, մյուս կողմից, սակայն, առաջին ծագող հարցն այս է՝ Կարեն Անդրեասյանը զբաղվում է քաղաքականությա՞մբ: Չգիտենք՝ սահմանադրությամբ ՄԻՊ-ին տրված ո՞ր լիազորություններ մասին է խոսում ՄԻՊ-ը, բայց ի սկզբանե այդ ինստիտուտը ենթադրել ու ենթադրում է, որ ՄԻՊ-ը չպետք է քիթը խոթի քաղաքական հարթություն, ինչից այդքան վախենում էր նախորդ ՄԻՊ Արմեն Հարությունյանը: Եվ անգամ առաջին պաշտպան Լարիսա Ալավերդյանը դժվարացավ համաձայնել այն հիմնավորումներին, որոնք իբր, ըստ Կ. Անդրեասյանի, սահմանադրությամբ նրան այդպիսի իրավունքներ տալիս են: Բայց շատ ավելի կարեւոր մի այլ բան՝ ներկա պաշտպանը հասարակության մեջ ունեցած կշռով, անկախ լիազորություն ունենանալ-չունենալուց, կարո՞ղ է, արդյոք, միջնորդի դեր ստանձնել: Դա կարող էր անել հասարակության կողմից ընդունված, բավական հայտնի, հարգված անձնավորությունը, ասենք՝ Պարույր Հայրիկյանը կամ Սոս Սարգսյանը, ասում ենք, ու հասկանում, որ դժվար է այդպիսի անձնավորություն գտնելն ու նրա անունը տալը: Բացի դրանից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, թե ո՞ր շրջանակներն է ներկայացնում Կարեն Անդրեասյանը, կարելի է ասել, որ սա այնքան էլ ինքնուրույն նախաձեռնություն չէ: Խնդիրն ի՞նչ է. ի՞նչ է նշանակում երկխոսություն ՀԱԿ-ի եւ իշխանության միջեւ: Արդյո՞ք նշանակում է ՀԱԿ-ի մեկ-երկու ղեկավարի եւ իշխանության (կոալիցիայի) առաջին դեմքերի երկխոսություն: Եթե այո, ապա ողջ գործընթացն է սխալ ընկալվում եւ սխալ մեկնաբանվում: Որովհետեւ՝ ովքե՞ր են գնում ՀԱԿ-ի հանրահավաքներին հասարակության դժգոհ ու անապահով շերտերը: Արդյո՞ք իրենց ցանկություններ հետ միջնորդավորված կապ ունեցող ՀԱԿ-ի երեք պահանջների կատարումը կարող է փոխել նրանց դժգոհության հիմքերը. մարտի 1-ի բացահայտումը բոլորն են ուզում, ոչ միայն ՀԱԿ-ի համակիրները, դա բարոյական բավարարվածության կարող է բերել, բայց ինչի համար, որ նախասկզբնապես հավաքվել էին դեռ 2008 թվականի մարտի 1-ից առաջ հանրահավաքավորները՝ այդ հարցերը դրանով չեն լուծվի. կամ՝ միտինգ կանես Ազատության հրապարակում, Մատենադարանի մոտ, թե՞ կրկեսի՝ դրանից եւս որեւէ բան փոխվո՞ւմ է բողոքող մարդկանց կյանքում:

Մարտի 1-ի հետ կապված բանտարկյալներին բաց թողնելն էլ ընդհանրապես երկրի՝ իշխանության եւ ընդդիմության դեմքի հետ է կապվում, բայց էլի էական ոչինչ չի փոխում բողոքավոր զանգվածի կյանքում: Հարց է ծագում՝ բողոքավոր զանգվածին հարցրե՞լ եք , որ երեք անշառ պահանջներ եք դրել, թե՞ մեկը (հայտնի է՝ ով) միանձնյա որոշել է ու այդ պահանջները վերջին պահին լույս աշխարհ բերել՝ շփոթության մատնելով բողոքավոր զանգվածին, որն այդպես էլ չի իմանում՝ սոված է, թե՞ քունն է տանում: Երբ Սերժ Սարգսյանն արձագանքեց մարտի 1-ի բացահայտումն ակտիվացնելու մասով, հասկանալի դարձավ այն սխեման, որ ձեռք է տալիս ընդդիմության մի շերտի ղեկավարներին, բայց, ցավոք, չի արտացոլում ողջ իրականությունը: Որովհետեւ որքան կուզես սխեմա գծիր, Հայաստանում առկա դժգոհության ալիքի հասցեատերը բոլորովին էլ միանշանակ ՀԱԿ-ը չէ, որ նրան լռեցնելով՝ դժգոհության ալիք մարի: Այդ ալիքն ուղղված է նրան, ով ի զորու է գներացնել այդ դժգոհությունը: Անգամ եթե իշխանությունն ու ՀԱԿ-ը երկխոսեն, ու ՀԱԿ-ի ղեկավարների համար մի փափուկ աղագա ուրվագծվի, եւ աշխարհի բոլոր մեղքերն էլ դուրս գրվեն Քոչարյանի վրա, մի կարճ ժամանակ միայն դժգոհողները կփոթվեն, քանզի քաղաքական համաձայնությունները չեն լուծի դժգոհների խնդիրները:

Տես էջ 3

ԱԶԳ

Ընթացիկ

Բազմանդամ ընտանիքների տնակները չեն բանդելու

Եվս մեկ փոփոխություն կառավարության համապատասխան որոշումներում

Աղեսի գոտում բնակարանների բաշխման գործընթացն իրականացվում է ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով սահմանված կարգով: Եթե այստեղ 2009-2010 թթ. կառուցված բնակարանների բաշխման ժամանակ խնդիրներ էին առաջացել բնակարան ստանալու համար անօթևան ընտանիքներից պահանջվող փաստաթղթերի փաթեթի ձևավորման հարցում, ապա այսօր խնդիր է մնում Գյումրիում դեռ անցյալ տարի շահագործված Մուշ-2 թաղամասի բնակեցման դանդաղ ընթացքը: Վերջինիս հիմնական պատճառներից մեկը, «Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպության դիտարկումներով, կառավարական որոշումներով սահմանված այն պարտադրանքն էր, ըստ որի բնակարան ստացած ընտանիքները պետք է բանդեին իրենց տնակները եւ ազատեին տարածքները: Երկրաշարժից անցած 23 տարիների ընթացքում անօթևան ընտանիքների հիմնականում ե՛ւ անդամների բանակն է ավելացել, ե՛ւ ընտանիքների ներսում նոր ընտանիքներ են ավելացել, սակայն այդ ընտանիքներին հատկացվում է ոչ ավելի, բան երկրաշարժին կորցրած թվով սենյակներով բնակարան: Նման ընտանիքները տնակը բանդելու եւ տարածքն ազատելու դեպքում չեն կարող ամբողջովին տեղավորվել ստացած նոր, տարածքով իրենց չբավականացնող բնակարանում:

«Շիրակ կենտրոն» ՀԿ-ն, արձագանքելով անօթևան ընտանիքների բողոքներին ու մտահոգություններին, վերջին մեկ տարվա ընթացքում հանրաքվեության իշխանություններին բազմաթիվ դիմում-ուղերձներ ու առաջարկություններ է հղել բնակաբաշխման գործընթացը կանոնակարգող կառավարական որոշումներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին: Առաջարկություններից մեկն էլ վերաբերում էր բնակարան ստացած բազմանդամ ընտանիքներին առանց տնակները հանձնելու բնակարանի սեփականաշնորհման հնարավորություն տալուն: Եվ ահա, տարվա ընթացքում արդեն երկրորդ անգամ անդրադառնալով նման հարցերի, ՀՀ կառավարությունը ապրիլի 14-ին ընդունած N 408-Ն որոշմամբ լրացումներ է կատարել իր 2009 թ. նոյեմբերի 26-ի N 1402-Ն որոշման մեջ: Երկու հիմնական լրացումներից մեկով որոշակի դեպքերում, «վերանախագծման (վերահատակագծման) անհրաժեշտություն առաջանալու պարագայում», կառուցապատողին հնարավորություն է տրվել կառավարության մեկ այլ որոշմամբ սահմանված բնակմակերեսի չափերը փոփոխել... Իսկ երկրորդ լրացումը վերաբերում է տնակների նշված խնդրին: Որոշմամբ կատարված լրացմամբ՝ աղեսի գոտու բազմաբնակարան շենքերից բնակարան ստացած բազմանդամ ընտանիքներին հնարավորություն է տրվել մեկից ավելի ոչ հիմնական շինություններ զբաղեցնելու դեպքում դրանցից մեկը բնակությունից չազատել եւ չքանդել, եթե ընտանիքի անդամների թիվը մեկսենյականոց բնակարան ստանալու դեպքում 5 եւ ավելի, երկսենյականոցի դեպքում 7 եւ ավելի, երեքսենյականոց բնակարան ստանալու դեպքում 8 եւ ավելի անձ է: Ընդսմին, չքանդվող ոչ հիմնական շինության ընտրությունը կատարելու է տվյալ ընտանիքի չափահաս անդամների կողմից համապատասխան մարզպետին ներկայացված դիմումի համաձայն՝ ելնելով քաղաքաշինական նպատակահարմարությունից, հաշվի առնելով նաեւ զբաղեցրած ոչ հիմնական շինությունների տեխնիկական վիճակը:

Հայտարարության մեջ մեկնաբանելով եւ բնակարան ստացած հարյուրավոր բազմանդամ ընտանիքներին շոշափելի աջակցություն համարելով նշված փոփոխությունը, «Շիրակ կենտրոնը» լուրջ բացթողում է համարել, մասնավորապես, որոշմամբ ստեղծվող՝ քանդման ոչ ենթակա շինությունների ուսումնասիրություն կատարող աշխատանքային խմբի կազմում ՋԼՄ եւ ՀԿ ներկայացուցիչների չընդգրկումը, այսինքն հասարակական մասնակցություն չապահովելը, ինչն ինքը դիմում-ուղերձներից մեկում առաջարկել էր: Երկրորդ, որոշման մեջ խոսք չկա տարբերույթ այլ պատճառներով կիսված այն ընտանիքների մասին, որոնց անդամների մի մասը եւս պարտադրված շարունակելու է բնակվել տնակներում: Կենտրոնի գնահատմամբ՝ պետք էր նաեւ կառավարության կողմից կանոնակարգել քանդման ոչ ենթակա ճանաչված կացարանների իրավական կարգավիճակի հարցերը:

«Մենք կարծում ենք,- ասվում է հայտարարությունում,- որ տեղին եւ ամբողջական լուծում կլինի, եթե քանդման ոչ ենթակա ճանաչված կառույցներ տնօրինող ընտանիքներին, հիմք ընդունելով նախորդ տարի ՀՀ ԱԺ-ի ընդունած «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը, հնարավորություն ընձեռվի անվճար օրինականացնելու իրենց կառույցները: Ի դեպ, նման հնարավորություն պետք է տրվի ոչ միայն բնակարանների բաշխման ներկա փուլով, այլ նաեւ նախորդ տարիներին բնակարան ստացած, սակայն կիսով չափ նոր բնակարաններ տեղափոխված բազմանդամ ընտանիքներին: Նման մոտեցման դեպքում այդ բազմանդամ ընտանիքների բնակարանային խնդիրը կարելի կլինի համարել իրոք լուծված, ինչը կնպաստի նաեւ աղեսի գոտում երկու տասնամյակից ավելի ձգվող անօթևանության բեռի զգալի թեթեւացմանը»:

Գ. Մ.

ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի արտգործնախարարն ընդունել է իր վրացի գործընկերոջը

Երեկ Երեւանում կայացել են ԱԳ նախարար **Էդվարդ Նալբանդյանի** եւ Հայաստանում աշխատանքային այցով գտնվող Վրաստանի արտգործնախարար **Գրիգոլ Վաշաձեի** բանակցությունները: Ողջունելով իր վրացի գործընկերոջը՝ Էդվարդ Նալբանդյանն ասել է, որ երկու երկրների միջեւ բարձր մակարդակով կանոնավոր շփումները հնարավորություն են ընձեռում վերահսկելու պայմանավորվածությունների իրականացումը, մշակելու համագործակցության նոր ուղղություններ, եւ այս ամենը երկու հարեւան եւ բարեկամ երկրների միջեւ հաստատված ամուր փոխհարաբերությունների վկայությունն է: «Այս տարվա առաջին չորս ամիսների ընթացքում արդեն կայացել են Վրաստանի նախագահի եւ վարչապետի այցերը Երեւան: Վերջերս այստեղ էին ներքին գործերի, պաշտպանության եւ տրանսպորտի նախարարները: Այցելությունների այս ինտենսիվությունը վկայում է Հայաստանի եւ Վրաստանի համագործակցության ոչ միայն ծավալուն բովանդակության, այլեւ իրական բարեկամական հարաբերությունների մասին», ընդգծել է նախարար Նալբանդյանը: ԱԳՆ մամուլի եւ տեղեկատվության վարչության հաղորդմամբ, հանգամանալից քննարկվել են Հայաստանի եւ Վրաստանի նախագահների միջեւ ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ընթացքը, երկկողմ հարաբերությունների օրակարգային հարցերի լայն շրջանակ:

Նախարարները քննարկել են նաեւ միջազգային եւ տարածաշրջանային մի շարք խնդիրներ: Կարեւորվել է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորումը: Նախարարներն անդրադարձել են նաեւ Հայաստանի եւ Վրաստանի ԱԳՆ-ների միջեւ անցկացվող խորհրդատվությունների ակտիվացմանը, միջազգային կառույցներում երկու երկրների համագործակցությանը, հայ-վրացական պետական սահմանի սահմանազատման գործընթացի խնդիրներին: Բանակցությունների օրակարգում էին նաեւ վիրահայությանը հուզող խնդիրները: Այդ առթիվ նախարար Նալբանդյանը գոհունակությամբ նշել է, որ Թբիլիսի իր վերջին այցի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունը՝ Թբիլիսիի Հայկական դրամատիկական թատրոնին վերանորոգման համար միջոցներ հատկացնելու վերաբերյալ, արդեն իրականություն է դառնում:

Հ. Ա.

Ծաղկավաճառների եւ անկիրթների ագրեսիա ...

1-ին էջից

Օրն անսակարկ է, բայց առեւտուրն այս հատվածում այնքան տենդագին էր, որ անհնար է զսպել վիրավորանքն ու զայրույթը ու չգրել այս մասին: Ամենն այնքան անթափույց, ցցուն ու գռեհիկ: Ծաղկավաճառներն իրար հերթ չէին տալիս՝ ձայնելիս: Մութ էր, ու ծաղիկները չէին երեւում, մարդիկ լապտերների կամ հեռախոսի լույսն էին օգտագործում, տեսնելու եւ առիթից օգտվելով, թոշնած, սեւացած ծաղիկներն անգամ վաճառում էին բարձր գներով:

Մթության մեջ՝ հոմշտոց, աղմուկ, բորբոքված, դժգոհ ձայներ: Այնպիսի մթություն էր, ասես պատերազմական այն տարիներն էին: Ծիծեռնակաբերդ տանող միակողմանի լապտերների աղոտ լույսը կիսաս-պռաս էր լուսավորում, խարխափելով վեր էին բարձրանում շարքերը: Երթն ուղեկցող երաժշտությունը՝ ամենաազդեցիկ վիճակ ու տրամադրություն ստեղծողը, գրեթե չէր լսվում, կամ միկրոֆոնները չէին աշխատում, կամ մարդկանց աղմուկն էր խլացնում մեղեդին: Խեղճ Լուսինե, ձայնը մերթընդմերթ էր լսվում, հիմնականում հանգչում ու մնում էր ծառերի փոքրիկ սաղարթներին: Փոխարենը որքան ուզես, ինչ բնույթի ասես՝ տնային-կենցաղային խոսակցություններ՝ բարձր, կոպիտ, անտաշ: Բարձրանում են՝ ոնց պատահի, անկանոն, իրար հոմշտելով, բարձր կանչելով, արեւածաղկի սերմ չրթելով եւ սա՝ ամբողջ ճանապարհին, (ընդհուպ հուշահամալիրի մուտքը եւ ներսում, թող կրկին ներվի ասելու, շուկայի աղմուկ բարձրացած: Հուշահամալիրը, ինքն իրենով՝ վեհ ու խորհրդավոր, կրակը՝ մարդաբույն անցնող ծաղկաշերտերիմեջ կորչող, գույներով շրջանակված, շատ գեղեցիկ ու նաեւ շա՜տ անհարիր մարդկային այդ ամբոխին:

Ճանապարհը հսկող զինվորները լուռ կանգնած են, ու հանկարծ նրանցից մեկը ծռվում ու կանչում է՝ «Դոլար առնեմ, ախպեր»՝ չգիտես, հեգնում է, թե՞ իր նմաններին հարազատություն տեսնելով, անկեղծանում: Հիշողության պուրակի մեծ հատվածում մի կին՝ կողքին երկաթե մեծ մոմակալ, դիմացի սեղանիկին՝ հուշամատյանով ու թղթիկների կապոցներով, դեպի իրեն է գրավում մարդկանց ուշադրությունը. Հայաստան-Ճապոնիա օգնության ակցիա է կազմակերպված: Ոմանք մոտենում, ցավակցական տողեր են գրում հուշամատյանում, վերցնում կամ չեն վերցնում բանկային հաշվեհամարով թղթիկը: (Որքանո՞վ էին հարմար օգնության այս ձեւը, ընտրված օրն ու վայրը):

Մարդկային հոսքի միակողմանի երթը խախտված էր: Ոմանք, դիմացից էին իջնում, մի մասն էլ՝ մարզահամերգային համալիրին զուգահեռ անցուղով, նույն՝ կիսախավարը: Այս մասում մարդկանց ուշադրությունը գրավում էր պուրակում տեղադրված «մոխիրներից հառնած» երեխան գրկին ահաբեկված մոր արձանը (բնօրինակը՝ Լոս Անջելեսում): Մոտեցողներից մի մասը փորձում էր ձեռքի հեռախոսի լույսով մի կերպ կարդալ արձանի մակագրությունը, մի քանիսը լուսանկարվում էր. «Էսօր նկարվելու օր է», ասում էին՝ «հենվում» արձանին, կեցվածք ընդունում:

Ահավասիկ Ծիծեռնակաբերդի երեկոն: Աննեղելի էր այդ ժամին բարձրանալ Ծիծեռնակաբերդ, որտեղ հեռուստասերիալային հոգեբանությամբ մարդկանց շերտը իրենց պահում էր այնպես, ինչպես ազգակցական-դրացիական իրենց հավաքներում, ընկերական-տնային կամ փողոցային միջավայրերում եւ միանալ նրանց: Որովհետեւ սերիալների ժամն էր ու քանի որ դրանք չէին ցուցադրվում, պարապը լցնելու բան էր պետք: Ե՛վ հեռուստահաղորդումները, ե՛ւ ուղիղ հեռարձակումները Ծիծեռնակաբերդից, մարդկանց խմբերը տներից դուրս էին հանում ու բերում այստեղ:

Ամենահուսահատեցնողը վերջին ակորդն էր, երբ մարզահամերգայինի տանիքի աստիճանները շուրջկալած ես տեսնում դդմակորիզ, արեւածաղկի սերմ ու զանազանք վաճառող կանանցով ու երեխաներով՝ աջից, ձախից, կենտրոնից: Մեկն ուղղակի կենտրոնում էր տեղավորել իր շարժասեղանը, ու երբ հարցրի՝ ինչո՞ւ է այսպես գրոհում, տգեղ է: Նա ասաց, թող վերեւները մտածեն, մեզ գործ տան, աշխատենք: Մի տարիքով կնոջ ասում եմ՝ թույլատրվա՞ծ է վաճառքը, նա թե՝ չէ, բայց հիմա արդեն թողնում են, բան չեն ասում (ոստիկանները): Բա՞ մի քանի կոպեկ չաշխատե՞նք, ավելացնում է: «Բայց հենց այսօր»: «Մարդիկ շատ են էսօր»: «Տեղը ծախած ա...», կողքից ակնարկում է մի տղա: Մի ծաղկավաճառ-կին ձայնը գլուխն է գցել՝ էժա՞ն ծաղիկ, էժա՞ն. 200 դրամ». շատ ագրեսիվ է ու ջղային:

Վիրավորակա՞ն է: Այո՛: Ամոթ է՝ շատ: Որո՞նք են պատճառները՝ դաստիարակությա՞ն՝ մեզ արդեն կործանող պակասը, անհրաժեշտ կարգուկանոնի բացակայությո՞ւնը, սոցիալակա՞ն վիճակը:

Հ. Գ.- Առաջարկներ

Արդահովել Ծիծեռնակաբերդի ողջ ճանապարհի լուսավորությունը պատշաճ մակարդակով, պահպանել մինչեւ կես գիշեր: Վերանորոգել կամ փոխել միկրոֆոնները, որպեսզի լսելի դառնա հնչող երաժշտությունը: Արգելել անհարկի ամեն տեսակի մանրավաճառություն: Բացել ծաղկավաճառ կետեր, ինչպես մոտակա ջրերի մեկ-երկու տաղավարներն են:

Իսկ առհասարակ լավ կլիներ որոշ հեռուստասերիալների փոխարեն նույն դերասանների մասնակցությամբ հաղորդաշար բացել՝ մարդկանց էթիկայթես կրթելու: Հեռուստաշրջագրերի հեղինակները թող մտածեն նաեւ այս մասին:

«Հարցը մեր եւ թուրքերի մեջ է»

«Ինձ համար շատ ավելի կարեւոր է, որ Թուրքիան ճանաչի Հայոց ցեղասպանությունը, թուրքական հասարակությունը ճանաչի», անդրադառնալով փաստին, որ հերթական անգամ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման «Ցեղասպանություն» բառը չարտասանեց, ասաց Տիկնիկային թատրոնի գեղարվեստական ղեկավար **Ռուբեն Բաբայանը** երեկ «Հայելի» ակումբում կայացած մամլո ասուլիսում:

Նրա գնահատմամբ՝ երկրի ներսում հարցեր ունեցող երկիրը չի կարող ուրիշներին պահանջներ ներկայացնել ու հարցեր բարձրացնել:

«Ես հարցեր ունեմ լուծելու իմ ներսում, իմ ընտանիքում իմ երեխան ու կինը պահանջներ ունեն ինձնից, եթե հարեւանս ճանաչի, որ ես վատ ամուսին եմ, ի՞նչ կտա դա իմ կնոջը: Ոչինչ, միայն բարոյական հաղթանակ, իսկ դա ոչինչ է»: Բաբայանի խոսքերով աշխարհի սերը կարող ենք շահել, երբ ցույց տանք, որ այս «կղզյակում արժանավայել կյանք կա»:

«Լավագույն ելքն այն է, որ յուրաքանչյուրը գտնվի իր իսկական տեղում: Իմանանք մեր անելիքն ու այն կատարենք»: Սա էլ պատմաբան **Սուրեն Սարգսյանի** տեսակետն է: Նրա գնահատմամբ՝ այսօր պահանջատիրությունն ավելի բարձր մակարդակի վրա է: «Այսօրվա սերնդի երակներում արյան շարժ կա: Համոզված եմ, որ այս տենդենցը կշարունակվի, եւ աշխարհը հաշվի կառնի ու մեր պահանջատիրությունն իր տեղը կգտնի: Մեր ցավը հասկանալի կլինի, եթե մեր հիմնական չհասկացողը հասկանա ու ընդունի իր կատարած ոճիրը: Հարցը մեր եւ թուրքերի մեջ է»:

Գրականագետ **Դավիթ Գասպարյանն** էլ առաջարկում է ազգային գաղափարախոսական կենտրոն ունենալ, որն իր շուրջ կհամախմբի հայությանը: «Պետք է արժանապատիվ ներկայանանք, որպեսզի աշխարհը հարգի մեզ: Այլեւս վիզը ծուռ, ձեռքը պարզած, խեղճ չպետք է լինենք: Ամոթ է»:

Հ. Հ.

ՄԻՊ-ը կմիջնորդի ընդդիմության եւ իշխանության երկխոսության համար

«Հնարավոր ներքաղաքական լարված իրավիճակներում, ինչպես նաեւ անկեղծ հավատալով, որ մեր հասարակության զարգացման եւ պետության հզորացման համար իսկապես անհրաժեշտ է քաղաքական ուժերի երկխոսությունն ու առողջ համագործակցությունը, ցանկանում եմ հանդես գալ Հայ ազգային կոնգրեսի եւ խորհրդարանական իշխող կոալիցիայի միջեւ միջնորդ դառնալու առաջարկությամբ»: Սա մի հայված է մարդու իրավունքների պաշտպան **Կարեն Անդրեասյանի**՝ նախօրեին արված հայտարարությունից: Թեպետ Հայ ազգային կոնգրեսն ու ՀՀԿ-ն Անդրեասյանի առաջարկությունը՝ դառնալ միջնորդ իշխանության եւ ընդդիմության երկխոսության համար՝ միանշանակ չընկալվեց, սակայն օմբուդսմենը դեռեւս չի կորցնում հույսը, որ կարող է այդ առաքելությունն իրականացնել: Նա համոզված է, որ հնարավոր չէ անմիջապես երկխոսության ամբողջական մեխանիզմներ առաջարկել: «Պետք է սկսել փոքրից ու գտնել կողմերի ներկայացուցիչներին ու երկխոսությանն ուղղված քայլ անել: Նրանք կընդունեն ինձ որպես միջնորդի՝ ոչ թե որպես անձի, այլ որպես ինստիտուտի:

Չի կարելի ասել, որ շաս ողջունվեց կամ միանգամից դրական արձագանքի արժանացավ իմ առաջարկը, բայց չեմ կարծում, որ հնարավորությունը սպառվել է», ասաց Կարեն Անդրեասյանը հավելելով, որ շուտով միջնորդական առաջարկ-նամակով կդիմի ՀԱԿ-ին եւ իշխող կոալիցիային:

Անդրադառնալով ՄԻՊ-ի հայտարարությանը՝ ՀՀԿ փոխնախագահ **Գալուստ Սահակյանն** ասել էր, որ օմբուդսմենն իրավունք չունի իշխանության եւ ՀԱԿ-ի միջեւ միջնորդ լինելու: Անդրեասյանն էլ հակադրվում է. որպես իրավաբան, կարող է իրավաբանորեն ապացուցել, որ ունի նման լիազորություն: «Ընդամենը պետք է կարդալ սահմանադրությունն ու մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքի երկրորդ հատվածը»:

Պաշտոնավարման 50 օրվա ընթացքում ՄԻՊ գրասենյակը 300

դիմում բողոք է ստացել: Ընթացք է տրվել 50-ին: Պատճառն, ըստ Անդրեասյանի այն է, որ մարդիկ երբեմն լավ չեն պատկերացնում, թե ՄԻՊ-ի գրասենյակն ինչ գործառույթներ կարող է իրականացնել: «Պաշտպանը մարդուն մարդկանցից պաշտպանելու իրավունք չունի», ասաց նա՝ հավելելով, որ երբ ԱԺ պատգամավորը հարձակվում է լրագրողի վրա կամ վիրավորում, պաշտպանը չի կարող որեւէ գործունեություն կիրառել:

«Մարդկանց մարդկանցից պաշտպանում են դատարանները: Մենք մարդկանց միջեւ հարաբերություններում չենք կարող մտնել, օրենքի պահանջն է այդպիսին»:

Կարեն Անդրեասյանը հարությանը եւ մասնավորապես լրագրողներին հայտնի է որպես զրպարտության եւ վիրավորանքի մասին հոդվածների ապաքրեականացման օրենսդրական նախաձեռնության հեղինակ:

Հենց այդ փոփոխություններից հետո էլ նախկին վաս սովորույթը՝ ծեծել լրագրողին փոխարինվեց մեկ այլ սովորույթով՝ սնանկացնել լրատվամիջոցին:

Օրենսդրական նախաձեռնության համար Անդրեասյանն իրեն մեղավոր կամ վատ չի զգում: Մեղավոր կամ վատ կզգար այն ժամանակ, երբ վատ բան աներ: Ընդհակառակը, պաշտպանն իրեն կրկնակի լավ է զգում, քանի որ նախ ապաքրեականացվել է զրպարտության մասին հոդվածը, նաեւ մարդու արժանապատվության պաշտպանության մեխանիզմ է դրվել:

«Նպատակն էր լրագրողին զերծ պահել ծեծից, բանտից, հիվանդանոցից: Այս օրենքը նպաստել է խնդրի լուծմանը: Այսօր բանտերում կամ հիվանդանոցներում հայտված լրագրողներ չկան», ասաց նա՝ շեշտելով, որ անհանգստացած է փաստով, որ օրենքի հիման վրա հայցեր են ներկայացվում լրատվամիջոցների դեմ ու կայացվում միլիոնների հասնող տուգանքի որոշումներ: «Սակայն այստեղ խնդիրն օրենքը չէ, այլ՝ կիրառումը»: ՄԻՊ-ն ակնկալում է, որ դատարաններն օրենքը ճիշտ կկիրառեն: Այդ կապակցությամբ նա դատավորներին ուղղված կոչով էր հանդես եկել: Օմբուդսմենի կոչին դատավորները պատասխանել էին լռությամբ:

2008-ին ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը նախկին օմբուդսմեն Արմեն Հարությունյանի հասցեին ասել էր, որ իր ամենավաս կադրերից է: Կարեն Անդրեասյանը չի բացառում, որ մի օր էլ իրեն կարող են համարել «ամենավաս կադր»: Սակայն նման գնահատական կարող է տալ ոչ թե երկրի նախագահը, այլ ԱԺ մեծամասնությունը, որոնց ձայներով էլ նա ընտրվել է այդ պաշտոնում: Ընդհանրապես Անդրեասյանն այդ գնահատականներին ուշադրություն չդարձնել: Փորձում է կենտրոնանալ ու կատարել իր սահմանադրական պարտականությունները:

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հ. Գ.- Մայիսի 1-ին ՄԻՊ-ը նախաձեռնել է անցկացնել իրավունքի ազատության ֆորում, որտեղ կանդրադառնա լրատվամիջոցների խնդիրներին:

«Մարդու իրավունքների առաջին պաշտպան Լարիսա Ալավերդյանին անվանում էին «Մայր Թերեզա», Արմեն Հարությունյանին՝ «Դոլար Արմեն», ո՞րն է ձեր մականունը», հարցին Կարեն Անդրեասյանը հրաժարվեց պատասխանել. «Այդ հարցն անցանք»:

«Հայաստանի բանկային համակարգը բավականին կայուն է»

Նշեց ԿԲ ֆինանսական համակարգի կայունության եւ զարգացման վարչության պետը

Կենտրոնական բանկի ֆինանսական համակարգի կայունության եւ զարգացման վարչության պետ **Վահե Վարդանյանի** գնահատմամբ՝ Հայաստանի ֆինանսական համակարգը, որի 90 տոկոսը բանկերն են, բավականին կայուն է: Ըստ վարչության պետի, դա պայմանավորված է երկու հանգամանքով՝ վճարունակությամբ եւ իրացվելիությամբ: Հայկական բանկերի իրացվելիության մակարդակը կրկնակի բարձր է ԿԲ սահմանած չափից: Նույնիսկ եթե վատագույն վարկերը հասնեն 30 տոկոսի, ինչը ԿԲ ներկայացուցիչը անհավանական համարեց, բանկերը կկարողանան ապահովել իրենց կայունությունը: «Եթե արտառոց ոչ մի բան չլինի, որը քիչ հավանական է, մեր ֆինանսական համակարգի ռիսկերը ցածր են», ասաց նա:

Խոսելով համաշխարհային տնտեսական զարգացումների մասին՝ Վահե Վարդանյանն ասաց, որ 2010-ին համաշխարհային տնտեսությունն աճել է 5 տոկոսով: Անցյալ տարին աչքի է ընկել նաեւ ապրահանքահումքային գների աճով, որը կազմել է 25 տոկոս, պղնձի գներն աճել են 40 տոկոսով, ոսկունը՝ 26 տոկոսով, նավթի գները՝ 28 տոկոսով: Սա մի կողմից ձեռնտու է Հայաստանին, քանի որ մեր երկրից արտահանվում են պղինձ եւ մոլիբդեն, իսկ նավթի գների բարձրացումն էլ բերում է տրանսֆերների աճին Ռուսաստանից, մյուս կողմից էլ, սակայն, ձեւավորում էր բարձր գնաճային միջավայր Հայաստանում: Ըստ ԿԲ ֆինանսական համակարգի կայունության եւ զարգացման վարչության պետի, 2010-ին Հայաստանի տնտեսությունը դուրս է եկել ճգնաժամից: Տնտեսական աճը կազմել է 2,1 տոկոս, գյուղատնտեսությունն ունեցել է 15 տոկոս անկում, արդյունաբերությունը աճ է ունեցել, որը նաեւ վարկավորման ծավալների 28 տոկոս աճի, ինչպես նաեւ կառավարության կողմից արտահանողներին եւ խոշոր արդյունաբերության ձեռնարկություններին հատկացված միջոցների արդյունք է:

«Մարտի 11-ին երկրի նախագահի ելույթին հաջորդած դրամի արժեզրկումը ինչպիսի՞ ազդեցություն կունենա Հայաստանի ֆինանսական կայունության վրա» հարցին Վահե Վարդանյանը կրկին պատասխանեց, որ եթե նույնիսկ փոխարժեքի տատանումներ լինեն, ապա բանկային համակարգը մեծ կորուստներ չի ունենա:

Արտերկրից փոխանցումների այս տարվա կանխատեսումների վերաբերյալ տրված հարցին էլ ԿԲ ներկայացուցիչը պատասխանեց, որ տարեկան ցուցանիշով այստեղ աճ կունենանք:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Օբաման, Կարեն Անդրեասյանը եւ «ջրբաժանը»

1-ին էջից

Նրանք ուշքի կգան՝ իրենց դժգոհության նոր գեներացնողների փնտրելով՝ առաջարկը պահանջարկ կծնի: Իսկ նշանակովի ընդդիմության (նշանակովի՝ ամերիկյան տերերի եւ անգամ՝ իշխանության կողմից) վազքը մինչեւ մառանն է՝ նրանց առաջնորդը հենց նորից խոսի տարածքներ վերադարձնելուց, հենց կրկին արմատական պահանջ չդնի, մարդկանց կյանքը փոխելու երաշխիքներ չտա՝ է, ավելի լավ է ներկա իշխանությունը:

Իսկ ջրբաժանի օրն իսկապես էլ կարող է ջրբաժան դառնալ՝ սեփական համախոհներին նոր խաբկանքներ ու նոր խաղալիքներ այլեւս առաջարկել չկարողանալու իմաստով: Չի կարող ընդդիմության լիդերն անվերջ միանձնյա որոշումներ պարտադրել հանրահավաքի մասնակից բողոքավոր զանգվածին՝ հանրահավաքը, որքան էլ տարերային, կանոններ, այնուամենայնիվ ունի. լիդերին փոխում են՝ հանրահավաքի չգնալով: Մանավանդ՝ եթե երկխոսությունը իշխանության եւ ընդդիմության միջեւ կամաց- կամաց ավելի առարկայական դառնա՝ ընդդիմադիրներն իրենց պահանջները մեղմացնեն, իշխանություններն՝ ընդդիմության հանդեպ վերաբերմունքը. մինչ երկուսը սիրախաղով կտարվեն, առաջինը՝ միայն արտահերթ, երկրորդը միայն հերթական ընտրություն, իրենց շուրջը չնայելով՝ կկտրվեն իրականությունից, կգա մի երրորդը եւ արծաթե սկուտեղով կվերցնի ամեն ինչ՝ գեներացնելով ընդդիմադիր զանգվածի պահանջներ: Առայժմ ընդդիմադիր ՀԱԿ-ն իր պահանջներից եւս մեկը (երկրորդը) կատարված է համարում. երեկ Երեւանի քաղաքապետարանն ի գիտություն է ընդունել ապրիլի 28-ին Ազատության հրապարակում հանրահավաք անցկացնելու ՀԱԿ-ի իրազեկումը: ՀԱԿ-ի համակարգող Լեւոն Զուրաբյանն օրերեսիով արձագանքեց այդ պատմական իրադարձությանը՝ նշելով, որ իշխանությունները բավարարեցին եւս մեկ պահանջ, մնացել է միայն մեկը: Բացի այդ՝ ՀԱԿ-ը սահմանազատվեց ՄԻՊ-ի միջնորդության առաջարկից՝ հայտարարելով, թե ՄԻՊ-ը սխալ է հասկացել իրենց՝ խոսքը Կոնգրես-գործադիր իշխանության երկխոսության մասին է, որտեղ ոչ ներքին, եւ ոչ էլ արտաքին միջնորդի կարիք չկա, այդպիսով պասն ուղարկելով իշխանությանը, թե՝ ձեր կողմից բանակցողների մեջ, խնդրեմ, ընդգրկեք ՄԻՊ-ին: Փաստորեն երկխոսությունն արդեն ինքնին կայանում է, էլ Կարեն Անդրեասյանի կարիքը բոլորովին չկա, չնայած վերջինս բացատրել էր կանխավ՝ զբաղված է պրեվենտիվ գործունեությամբ, մարդու իրավունքների ոտնահարումը կանխարգելելու համար ՀԱԿ-ի եւ կոալիցիայի միջեւ միջնորդ դառնալով: Մյուս կողմից էլ՝ Կ. Անդրեասյանին էլ կարելի է հասկանալ՝ գործունեության 50 օր է ամփոփում, մի ինչեղ գործ չեղավ, որտեղ մարդու իրավունք պաշտպանած լինի, թարսի պես էլ իր սարքած օրենսդրական փոփոխության հետեւանքով թերթ է, որ քարշ են տալիս դատարան՝ «մուծվելու», ի՞նչ անի, որ միջնորդ չլինի: Մեր երկրում միայն քաղաքական գործընթացներին մասնակցելով մարդ կարող է հայտնի դառնալ, մարդու իրավունք պաշտպանելը գործ չի, մարդն էլ ահա կաբվից դուրս է գալիս:

Ու մինչ հայերը շունչները պահած սպասում էին՝ Օբաման կասի-չի ասի «Ցեղասպանություն» բառը, անցած շաբաթ շաս կարեւոր իրադարձություններ տեղի ունեցան. խոսքը նրա մասին չէ, որ Կարեն Անդրեասյանը նստած իր միջնորդ լինելու հիմքերն էր գրում, այլ այն, որ նախագահ Սարգսյանը փորձեց փոխել խաղի կանոնները քաղաքական պարտիայում, եւ դա ստացվեց: Առայժմ. ՀԱԿ-ը պասը վերցրեց, ջրբաժանը կարող է բոլորովին էլ այլ բանի բաժանում նշանակել՝ այդ մասին ապրիլի 28-ի հանրահավաքից հետո կխոսենք: Իսկ Օբաման, ինչպես եւ սպասվում էր, չասաց «Ցեղասպանություն» բառը, այլ կրկնեց Հովհաննես-Պողոս 2-րդ պապին՝ ասաց Մեծ Եղեռն եւ կրկնեց երեք անգամ՝ չհասկացողների համար, «խաղաղ ու արդար աշխարհի» բազմաշաք մեծ պետության բազմադեմ կեցվածքի նշան որպես :

«Յունիբանկ»-ը «Ինտերնետ Բանկ-Հաճախորդ» ծառայությունը տրամադրում է անվճար

Ինտերնետ ցանցից օգտվողների թվաքանակի մեծացման հետ մեկտեղ, Հայաստանում գնալով աճում է նաեւ «Ինտերնետ բանկ-Հաճախորդ» համակարգով իրականացված բանկային գործարքների ծավալը: «Յունիբանկ»-ն առաջիններից մեկը ներդրեց այս համակարգը՝ նպաստելով Ինտերնետ բանկինգի կայացմանը հայաստանյան շուկայում: «Ինտերնետ բանկ-Հաճախորդ» համակարգը հնարավորություն է տալիս հաճախորդին հեռակա կարգով կառավարել իր բանկային հաշիվները աշխարհի յուրաքանչյուր կետից՝ ինտերնետին միացված համակարգչի միջոցով: Այսինքն, համակարգը հաճախորդին տրամադրում է լիարժեք բանկային սպասարկում իրական ժամանակի ռեժիմում, հնարավորություն տալով հաճախորդին, առանց բանկ այցելելու, իրականացնել հետեւյալ գործառնությունները՝ վճարման փաստաթղթերի մուտքագրում, խմբագրում եւ տպագրում, փաստաթղթերի առաքում բանկ, գործարքների իրականացում «Գործառնական օր» համակարգում, բանկ ուղարկված փաստաթղթերի վերաբերյալ տեղեկանքի, բանկային հաշիվներից քաղվածքի ստացում եւ տպագրում, հաշիվների ընթացիկ կարգավիճակի վերահսկում եւ այլն:

Ծառայությունից օգտվելու համար հաճախորդը պետք է դիմում ներկայացնի բանկին՝ «Ինտերնետ Բանկ-Հաճախորդ» համակարգում գրանցվելու նպատակով: «Յունիբանկ»-ի «Ինտերնետ Բանկ-Հաճախորդ» համակարգի առավելությունն օգտագործման պարզությունն է. այն չի պահանջում հատուկ ծրագրի ներդրում՝ հաճախորդը մուտք է գործում համակարգ բանկի կայքի միջոցով: Անհրաժեշտության դեպքում բանկի աշխատակիցները հաճախորդին մանրամասնորեն կներկայացնեն համակարգի հետ աշխատելու գործընթացը: Հաշվի առնելով «Ինտերնետ Բանկ-Հաճախորդ» համակարգի օգտագործման բարձր արդյունավետությունը եւ հաճախորդների համար դրա հասանելիության բարձրացման անհրաժեշտությունը, «Յունիբանկ»-ն այս ծառայությունը այսուհետ կտրամադրի անվճար:

Նշենք, որ Յունիբանկի «Ինտերնետ բանկ-Հաճախորդ» համակարգի անվտանգությունը երաշխավորված է VeriSign Secure Site Pro with EV հանրահայտ հավաստագրի միջոցով: Հավաստագիրը հիմնված է EV եւ SGC տեխնոլոգիաների վրա, որոնք ֆիշինգի (ինտերնետային խարդախության տեսակ) դեմ պայքարի ամենահաջող մեթոդներն են: VeriSign Secure Site Pro with EV հավաստագիրը բրաուզերում կարմիր փոխարեն արտապատկերում է կանաչ հասցեատող եւ բանկի անվանումը՝ բացառելով երրորդ անձանց կողմից խարդախության բոլոր փորձերը:

«Ինտերնետ բանկ-Հաճախորդ»ծառայության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվության համար այցելեք www. unibank.am կայքը կամ զանգահարեք 59 55 55 հեռախոսահամարով: Ձեր հարցերը կարող եք նաեւ ուղղել մեր մասնագետներին կայքի «Հետադարձ կապ» բաժնում տեղադրված հատուկ ձեւը լրացնելու միջոցով:

ԱԶԳ Ծոկարտակ

Անսանձ ալիքները, Սամվել Կարապետյանը եւ ես

Ինչպե՞ս նկարագրեմ դա: Եվ այն էլ առանց հոլանդական խրթին ծովային տերմիններ: Դե լավ, խոսքս առավել մատչելի դարձնելու համար սկսենք նրանից, որ իրոք, եղանակի կանխատեսումները համընկնում են կյանքի իրողություններին: Խոսացել էին Թասմանի ծովի մեջտեղում կիսափոթորկային քամի՝ երեք օրով, խնդրեմ, արդեն մեկ ամբողջ օր գնացել ենք կատաղած ծովի վրայով: Այո, իհարկե, քսան-քսանհինգ հանգույցը դեռեւս փոթորիկ չէ, այլ ընդամենը դրա կեսը: Բայց միեւնույնն է, դա չափազանց շատ է, երբ արդեն շարունակվում է երկրորդ օրը, իսկ առջեւում դեռ այնքան ճանապարհ ունենք անցնելու: Եվ ուրեմն, ի՞նչ է կատարվում մեզ հետ: Քանի որ խոսացել եմ առանց տերմինների, ասեմ այսպես. քամին փչում է ձախից, ինչից հետեւում է, որ մեծ սակսելը պայթելու աստիճան լցված է օդով եւ նավը թեքում է աջ կողմի վրա: Նորմալ է: Միշտ էլ այդպես լինում է: Լինում է եւ հակառակը: Փչում է աջից, եւ մենք բոլորս թեքվում ենք ձախ: Ամեն ինչ տրամաբանական է:

Ես կանգնած եմ հենց շեմին նավի գլխավոր «սենյակի», որտեղ մենք հանդիպում ենք, ուտում ենք, եւ ինչպես «Կիլիկիա»-ում էր՝ ընդունում ենք մեր հյուրերին: Կանգնած եմ դեպի վեր տանող սանդուղքի ամենավերեւի աստիճանին: Բռնել եմ այս նույն մուֆը պաշտպանող ծածկի եզրից: Ժամանակ առ ժամանակ գրպանիցս հանում եմ հուշատետրս եւ երեք տակ ծալված՝ գրառումներ կատարում: Աշխատում եմ թղթին հանձնել նույնիսկ քամու ձայները եւ առագաստանավի ալիքներով անցնելու աղմուկը: Նոտաներից գլուխ չեմ հանում, այդ պատճառով էլ գրում եմ տառերով: Ավելի ճիշտ՝ «շ» տառով: Հետո մի քանի «շ»՝ իրար կողքի: Կարդում եմ: Տեսնում եմ, որ այն չէ: Հնչյուններ շատ կան: Որսում եմ ե՛ւ «ֆ», ե՛ւ «ժ», ե՛ւ իհարկե՝ «ու»: Դա արդեն այն ժամանակ, երբ քամին ոռնում է: Հետո դղրդյուն եմ լսում, որ վերածվում է թմբուկի մանրահարվածների: Եվ հանկարծ մեկ վայրկյան, որը մի ողջ հավերժություն է թվում, տիրում է զրնգուն լռություն, որն ավարտվում է պայթյունով: Այդ մի քանի ալիքներ էին, որոնք «բախվեցին ճակատներով»: Հիշում եմ, մեր լուսահոգի կոկ Սամվել Սարգսյանը ոչ մի կերպ չէր ուզում համաձայնել, թե նման բան հնարավոր է: Իսկ այ, ես ինքս եմ տեսել, թե դա ինչպես է տեղի ունենում: Մանավանդ հենց նավակողի մոտ: Եվ լսում ես դղրդոց: Սկզբում հայացքդ կանգ է առնում հեռվում թավալվող ալիքի վրա, որը շուտով սկսում է կոլոլվել գորգի պես: Իսկ դրանից սկսում է ուռչել: Իսկ ուռչելով վերածվում է մի հսկայական բլրի, որի առջեւ գոյանում է ահռելի ու խոր մի ջրագոգ, ինչի պատճառով էլ բլուրն սկսում է նմանվել մեծ սարի: Ու երեւում է, թե ինչպես է առագաստանավի սուր քիթը իջնում ներքեւ: Նավախելը բարձրանում է: Եվ ուր-որ է սարը կփլվի նավի վրա: Բայց վայրկենապես ցած է իջնում նավախելը: Քիթն սկսում է դանդաղ, հաստելով սարի լանջը, բարձրանալ գագաթ: Լանջի կեսին չհասած, նավը կախվում է օդում: Սարն ասես չի էլ եղել: Այն անհետացել է: Փշրվել, թեեւ ջուրը չի կարող փշրվել: Եվ նավը, հարվածելով ջրագոգի հատակին, իսկույն մագլցում է արդեն այլ, ոչ մեծ բլրի լանջով, որը չգիտես որտեղից հայտնվեց ճանապարհին: Նավաթթի հատած ջրային մակերեսին երկու կողմից ձգվող սպիտակ բեղերը բարձրանում են վեր, եւ քամին պոկելով փրփուրե գլխարկը, այն փչում է տախտակամած: Ես կտրուկ կռանում եմ: Բայց ուշ է, ջուրը հարվածեց դեմքիս: Թեւքով մաքրում եմ ջրի կաթիլները, շուրթերիս եւ աչքերիս վրա զգալով սառն ու խիտ աղը: Եվ հակառակի պես հենց այդ ժամանակ մտածում եմ թարմ, կանաչ վարունգիկի մասին: Որքան տեղին կլիներ այս աղի հետ: Այնինչ քամին ուժեղանում է: Խելին ամրացված Հայաստանի պետական դրոշը այնպես է ձգված, որ նմանվում է կարմիր-կապույտ-նարնջագույն ներկված ֆաներայի: Ամենասարսափելին այն է, որ համաձայն կանխատեսման, քամին ավելի է ուժգնանալու, իսկ ալիքներն ավելի են ահագնանալու: Եվ այսպես՝ ողջ գիշեր, ինչպես ասում է Հայկ Բադալյանը, հաջորդ ողջ օր եւ մինչեւ կեսգիշեր: Բայցեւ հանկարծ գիտակցում ես, որ հոգիդ հրձվում է: Որ կշարունակես բնության այս հրաշքին նայել նաեւ լիալուսնով: Քանզի ամեն ինչ անսովոր է: Անսովոր են ալիքները: Նույնիսկ լուսինն է անսովոր: Թվում է, ի՞նչ անսովոր բան կարող է լինել դրանց մեջ: Կասեք՝ ալիք են, էլի: Նույնիսկ դասակարգում ունեն. ծփանք, ալեծալք, կոհակ, փոքր ալիքներ, երկար, կատաղի, ցունամի... Բայց ես տեսել եմ շատ ալիքներ, որ պտտվում են, ոլորվում, կռվում: Տեսել եմ նաեւ պարզապես մի առանձնակի գեղեցիկ ալիք: Բայց այդ ամենը մի քանի օր ու գիշերվա ընթացքում միախառնվում է, միաձուլվում, կազմելով բարձր սարեր ու խոր ձորեր, ստեղծելով փոթորկի, ամպրոպի ու եռքի միասնական պատկեր, եւ այդ ամենը տեղով իսկ գեղեցկություն է: Ինչ վերաբերում է լուսնին, այն իրոք անսովոր է: Մի տեսակ մեծ է, հսկայական, մոտ: Տղաներից մեկը, չեմ հիշում՝ Արգենտինայում, Չիլիում, թե Զատկի կղզում, ասաց, որ լսել է, թե լուսինը նկատելիորեն մոտեցել է երկրագնդին: Բայց հիմա այն ոչ միայն ավելի մեծ է երեւում: Դեղնություն է խստացել վրան: Այն էլ այնպիսի, որ չեն երեւում մանկուց մեզ ծանոթ բծերը: Ես չեմ ցանկանում իջնել նավամբար, ավելի ճիշտ՝ ընդհանուր նավասենյակ, իսկ ավելի ճիշտ՝ իմ նավախուց: Ասված վկա, նման ժամերին այնտեղ անելու բան չկա: Թեեւ ավելի հարմարավետ է: Ահա շատերը պառկեցին քնելու: Միայն հերթափոխողներն են ղեկի մոտ կանգնած նավախելին. Հայկը եւ Մուշեղը: Ժամանակ առ ժամանակ նրանցից մեկն իջնում է ներքեւ: Ավելի հաճախ՝ Հայկը: Չէ՞ որ, ինչպես ասել եմ, մեր գլխավոր քարտեզագետն է եւ գլխավոր օդերեւութաբանը: Իսկ ներքեւում հենց նրա քարտեզներն ու սարքերն են: Նավախելին հայտնվեց Սեմը: Ինչպես երբեմն եմ կոչում՝ Սամվել Կապիտանյանը: Նայեց շուրջը: Նայեց ինձ: Ձեռքը բարձրացրեց՝ կողքից-կողք ճոճվելով: Ես ձեռքով ցույց տվեցի բանը, ներեցեք տերմինի համար՝ նստարանը: Նա սկզբում պետք է բավականին բարձրանա, դուրս գալու համար այն փոսորակից, որը կոկպիտ է կոչվում եւ պարզապես նավախելի խորացված մասն է: Հետո լայն տարածած ձեռքեր, ասես թռիչքի է պատրաստվում, ճոպանաստարքերից, ցցոնքներից, թոկերից բռնվելով եւ դարձյալ ձեռքը գցելով պարաններին, վերջապես շրմփում է իմ առջեւում գտնվող նստարան-բանին: Մեր միջեւ, ինչպես հայտնի է, մի նեղլիկ, շարժական սեղան է, ծածկված բրեզենտով: Ժամանակ առ ժամանակ ձախ նավակողից ջրի ցայտեր են թռչում դեպի մեզ: Եվ իսկույն այնքան խորն ենք կռանում, որ ճակատներով դիպչում ենք սեղանի թաց եւ աղի մակերեսին: Մեր աչքերի մեջ ուրախ փայլ կա եւ մի տեսակ հիացմունք: Ասես հրձվում ենք, որ անընդմեջ քամիներն ու ալիքները անդադար խփում են առագաստանավի կողերին, եւ ամեն ինչից երեւում է, որ պայքանը արժանապատվորեն դիմանում է հարվածներին: Եվ ես սկսեցի միանգամից.

- Առաջին անգամ ե՞րբ ես մտածել աշխարհաշուրջի մասին:

- Ութսունականների կեսերից,- միանգամից էլ պատասխանեց նա, ասես հենց այդ հարցին էր սպասում այդ անպատեհ ժամին, թեեւ հիանալի գիտեր, որ ինձ համար գոյություն չունի «անպատեհ ժամ» հասկացություն:

- Իսկ ինչո՞ւ հենց այդ ժամանակ:

- Ողջ աշխարհը բավական հիմնավորապես նախապատրաստվում էր նշելու Կոլումբոսի կողմից Ամերիկայի հայտնագործման 500-ամյակը: Մենք, այն ժամանակ դեռեւս երիտասարդ առագաստանավորդներով, նախանձում էինք իհարկե, թե իրոք ինչպիսի եռանդով է ողջ ծովային եւ ցամաքային աշխարհը պատրաստվում դիմավորել այդ տոնը: Դեռ այն ժամանակ ես գիտեի, որ առագաստային սպորտի Մեքքան համարվում է Նոր Զելանդիան: Եվ հիմա, այն բոլոր օրերի ընթացքում, երբ Նոր Զելանդիայի Հյուսիսային կղզում էինք, անընդհատ այն ժամանակներն էի հիշում:

Եվ քանի որ արդեն անցանք «դիմանկարի վրձնահարվածներ» ժանրին, ապա ընդմիջեմ մեր երկխոսությունը՝ մի քանի բառով խոսելու այն ժամանակի մասին, որ պատմեց Սամվելը: Այդ տարիներին նա մոտ քսանհինգ տարեկան էր, ես՝ մոտ հիսուն: Եվ ամեն ինչ լավ հիշում եմ: Իրոք, աշխարհը նախապատրաստվում էր տասը տարի անց տոն կազմակերպել, իսկ Խորհրդային Միությունում ապարդյուն փորձում էին լուծել պարենային խնդիրը: Եվ հանկարծ մի ինչ-որ ռոմանտիկներ, տեսեք-տեսեք, որոշել են մասնակցել այդ հոբելյանական արշավներին: Ոմանք՝ աշխարհի շուրջ, ուրիշները՝ զանգվածային կարգով հատելով Ատլանտյան օվկիանոսը՝ Կոլումբոսի կարավելլաների երթգծով: Եվ երազողների մեջ էր «Կիլիկիա»-ի ապագա կապիտան-խորհրդատուն եւ «Արմենիա»-ի ապագա նավապետը, որն անընդհատ բազմաթիվ կետերից կազմված անկետներ էր լրացնում՝ միջազգային մրցումներին մասնակցելու համար: Եվ իհարկե, ձգտում էր դեպի առագաստանավորդների համար իրոք Մեքքա հանդիսացող Նոր Զելանդիա: Նրան թվում էր, թե սկսված վերակառուցումը իրոք վերակառուցում է: Թեեւ ինչ-որ բան փոխվել էր մեր կյանքում, այդ թվում եւ Աստծո օրհնած առագաստանավորդների կյանքում: Համենայն դեպս դրանք արդեն վաթսունականները չէին, ոչ էլ յոթանասնականները կամ ութսունականների սկիզբը: Եվ Սամվելն արդեն «Աջարիա» առագաստանավով դուրս էր գալիս Սեւ ծովի սահմաններից: Պետք է պատկերացնել իսկական ծովայինի հոգեվիճակը, որն արդեն հայտնվել է Միջերկրական ծովի ջրերում: Եղել է ոչ միայն Բուլղարիայում, այլեւ Հունաստանում, իսկ ռուսական եւ ուկրաինական նավահանգիստները հարազատ տուն են դարձել նրա համար:

1992 թվականին Երկիր մոլորակի համարյա բոլոր առագաստանավորդները պատրաստ էին մասնակցելու հոբելյանական արշավին՝ նվիրված Ամերիկայի հայտնագործման 500-ամյակին: Բոլորի շուրթերին Քրիստոփոր Կոլումբոսի անունն էր եւ իսպանական Կադիս նավահանգիստը, որտեղից 1492 թվականին մեկնարկեցին «Սանտա Մարիա», «Պինտա» եւ «Նինյա» առագաստանավերը: Ի դեպ, հենց այնտեղ, Պալոս բնակավայրում էր գտնվում Եվրոպայում արդեն լավ հայտնի ճանապարհորդ Մարտիրոս Երզնկացին: Եվ եթե հաշվի առնենք, որ Կոլումբոսը հսկայական ջանքով անձնակազմեր հավաքագրեց երեք կարավելլաների համար, ապա չի կարելի չհամաձայնվել Սեն-Մարտենի, Ամառյանի եւ Պորտուգալյանի գիտական կարծիքին, որոնք գտնում էին, որ ծովարշավի պետը երկու ձեռքով պետք է կառչեր պրոֆեսիոնալ ճանապարհորդից, որը տիրապետում էր ծովայինի արվեստին եւ գիտեր բազմաթիվ եվրոպական լեզուներ: Բայց Կոլումբոսից ու Երզնկացուց վերադառնալիք Կարապետյանին, որը Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտն ավարտելուց հետո գիտակցեց, որ ուսումնառության տարիները բուհում նրան շատ գիտելիքներ տվեցին, բայց չտվեցին այն մասնագիտությունը, որի կայծն Աստված էր դրել իր մեջ, որից բորբոքվում էր առագաստանավորդի հոգու հուրը:

...Եվ ահա, ասենք ուղղակի՝ այս սովորական դարձած արտակարգ իրավիճակի պայմաններում, ես նրան հարց եմ տալիս միայնակ նավարկության մասին:

- Ես գիտեի, որ այդ մասին կհարցնեք ինձ: Ասեմ ազնվորեն: Այսօր առանց գաղափարի, առանց այսպես ասած՝ գաղափարախոսության իմաստ չունի մեկնել միայնակ նավարկության: Տեսեք, հիմա մեզ մոտ՝ «Արմենիա» առագաստանավում կա այդ գաղափարը: Եվ այն էլ ի՞նչ գաղափար. Սփյուռք, Մեսրոպ Մաշտոց... Դուք ճիշտ եք, աշխարն, ավաղ, ոչինչ չգիտի այն մասին, թե ինչու են հայերը սփռվել ողջ հողագնդով մեկ եւ ինչու են ամենուր եկեղեցիներ կառուցում: Դա մեծ գաղափար է՝ հենց աշխարհաշուրջով, կամ ինչպես դուք եք ասում՝ հենց սփյուռքի աշխարհագրությամբ այդ ամենը պատմել, ցույց տալ, բացել աշխարհի առջեւ: Թեեւ պետք է խոստովանեմ, որ ցանկացած շուրջերկրյա նավարկություն միշտ ինքնին երեւույթ է, առանձնապես եթե պտույտ ես գործում Հորն հրվանդանի շուրջը կամ հաղթահարում Թասմանի ծովը:

Հենց այդ ժամանակ էլ կատաղի քամու հերթական պոռթկումը ահռելի ուժով պոկեց ձախ նավակողից ծառացող ալիքի փրփուրե բաշը: Այս անգամ չհասցրեցինք կռանալ: Ամեն ինչ չափից ավելի վայրկենական էր: Հզոր հորձանքը հարվածեց իմ մեջքին ու ծոծրակին, Սամվելի՝ ուղիղ դեմքին: Ասեմ անկեղծորեն՝ նման տեսարանը նավում միշտ քրքիջ է առաջացնում: Ես ու Սամվելն էլ սկսեցինք քրքջալ: Քրքջաց ղեկի մոտ կանգնած, առանց այն էլ միշտ ժպտուն Վահագնը, եւս մեկ անգամ հիշեցնեմ՝ մեր նորաթուխ հայրիկը, իսկ փիչ հեռվում կանգնած կոկ Սաֆոն քրքջաց, ցուցադրելով իր սպիտակ ատամները, ինչպես անում է Վախթանգ Կիկաբիձեն: Ես ու Սամվելը նետվեցինք ներքեւ, դեպի մեր նավախցերը: Հանվեցի: Սառը, քաղցրահամ ջուր լցրեցի վրաս, չսպասելով, որ այն մի փիչ գոլանա: Շփեցի մարմինս կարմրելու աստիճան: Եվ մտածեցի՝ ի՞նչ լավ է այս ամենը, գո՛ղը տանի...Ուզում էի հնարավորինս արագ բարձրանալ վերեւ, նայել ալիքներին, մտածել, թե որքան եմ ցանկանում սանձել անզուսպ քամին, ինչպես վայրի մուսանգի՝ թամբել իններորդ ալիքը եւ լողալ, լողալ, լողալ... Եվ որպեսզի շուրջս լինեն անվերջանալի ալիքներ եւ միայն մեկ՝ իններորդ:

ՋՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ
Թասմանի ծով

Ո՞վ է Վինոգրադովը՝ հայ ժողովրդի նվիրյալը

1915 թ. հուլիսի 18, շաբաթ երեկո, Վասպուրականի Այգեստան բնակավայրում խուճապ էր: Մարդիկ հարկադրաբար, թուրքական յաթաղանից փրկվելու համար, պետք է թողնեին իրենց ծննդավայրը, հարազատ հողը, պաղեստինական բնակարանները: Աղմուկ, աղաղակ, լաց ու կոծ: Արնախում տաճիկը մահ ու սարսափ էր սփռել Հայաստանում, ավերածություն: Բնավեր վասպուրականցիները անեծք էին թափում տաճիկի գլխին: Մարդիկ քայլում էին, քայլել ասելը քիչ է, հազիվ էին քարշ տալիս տանջված ոտքերը: Քանի՞-քանի՞ հիվանդ ու հոգնաբեկ ծերունիներ, մանուկներ մնացին գաղթի ճամփեքին, քանիսները խելագարվեցին: Գնում էր տեղահանված մի ողջ երկիր՝ Վասպուրական աշխարհը, բզկված, արյունլվա: Նրանց շարքում էր նաեւ Խերանյանների գերդաստանը:

Հետագայում արդեն ճանաչված գրող **Մկրտիչ Խերանյանը**, որն այդ ժամանակ 15 տարեկան էր, հիշում է այդ սարսափելի օրերը, թե ինչպես գաղթականների մի բազմամարդ խումբ հասավ Վաղարշապատ, ապաստան գտնելով Վանքի տարածքներում, հարեւան անտառում: Այդ ամենի մասին նա պատմում է իր «Երկար, երկար մի ճանապարհ» հուշապատում գրքում: Պատմում է, որ այստեղ, Վաղարշապատում նույնպես շատերն իրենց մահկանացուն են կնքում: Խերանյանների ընտանիքը, ի վերջո, բարի մարդկանց օգնությամբ ապաստան է գտնում Էջմիածնից հեռու գտնվող Քյորփալու գյուղում (այժմ՝ Արշալույս), ուր ապրում է մեկ տարի: Այստեղ էլ իր մահկանացուն է կնքում Մկրտիչի եղբայրը՝ Կարոն: Տառապյալների շատ գերդաստաններ բնակություն են հաստատում Արեւելյան Հայաստանի տարբեր բնակավայրերում:

Մկրտիչ Խերանյանը որպես մանկավարժ աշխատում է Քյորփալուում, Սամաղարում, Էջմիածնում, դառնում է ճեմարանի սան, իրեն ամբողջապես նվիրելով գրականությանը: Երբ կարդում էի նրա հուշագրությունները, հանդիպեցի մի հետաքրքրական պատմության, որի մասին իմանում էի առաջին անգամ:

Տաճիկները Ալեքսանդրապոլը գրավելուց հետո նախապատրաստվում էին շարժվել դեպի Երեւան: Այդ մասին էլ գրում է իր գրքում՝ «Վինոգրադով» հատվածում: «Թուրքական հրամանատարը Ալեքսանդրապոլը գրավելուց հետո, հարձակում նախապատրաստելով Երեւանի վրա, հրամայում է դեպոյի մեքենավար Վինոգրադովին՝ թուրքական զորքն Ալեքսանդրապոլից տեղափոխել Երեւան: Ռուս մեքենավարը նախ՝ կտրականապես մերժում է կատարել այդ հրամանը, բայց հետո, մահվան սպառնալիքի տակ, համաձայնում է վերջապես, սակայն նախորդ որոշելով, որ վիժեցնելու է այդ դիվային ծրագիրը: Վինոգրադովը եւ իր ընկերները Ալեքսանդրապոլից դեպի Երեւան տանող գծի վրա, ութ կիլոմետր հեռանալով Ալեքսանդրապոլից, խորտակում են գնացքը, լեփ-լեցուն թուրքական զորքով: Զոհվում է նաեւ ինքը՝ Վինոգրադովը»: Այդ մասին Խերանյանը տեղեկանում է «Մշակ» թերթից, որն այդ լուրը հաստատեց ողջ հայությանը:

Ո՞վ է եղել այդ Վինոգրադովը, որը հայ ժողովրդի այդ օրհասական պահին իր կյանքի գնով թիկնոց է դառնում տառապյալ հայությանը:

Եվ այսօր միտք է ծագում՝ որոնել ու գտնել, թե ով է եղել այդ ռուս մեքենավարը, որն իր հերոսական արարքով այն օրերին արժանանում է հայ ժողովրդի եղերական օրերի պատմության էջերում հավերժ հիշվելու գնահատանքին, որպես իսկական հերոս:

Մկրտիչ Խերանյանը, գաղթի ճանապարհին տեսած ողբերգությունների վկան, սիրված մանկավարժ էր, անվանի գրող, իր Վանին, հայրենիքին անմնացորդ նվիրված անձ: Հիշում եմ նրան, որին ինքս էլ պարտական եմ հայ լեզվին ու գրականությանը լավատեղյակ լինելու համար: Ասես իր ծննդավայրի կարոտից էր, որ թախծոտ աչքեր ուներ: Տունը, ուր ապրում էին Խերանյանները Երեւանում, գտնվում էր Նոր Բութանիա թաղամասում, որն այսօր էլ կա: Բակում սեփական ձեռքերով պատրաստել էր Վանա լճի փոքրիկ նմանակը: Հիմա կլիներ 110 տարեկան, այսօր էլ նա մեզ հետ է եւ Մեծ եղեռնի կենդանի վկան է՝ իր թողած գրական ժառանգությամբ, եւ շարունակում է իր կյանքի երկար ու երկար ճանապարհը, կրկին ընդվզելով երիտթուրքերի անողոք հանցագործությունների դեմ: Հայ ամեն ժառանգ, ով տեղյակ է պատմությանը, այսօր էլ դատարկում է Մեծ եղեռնը եւ երիտթուրքերի հետնորդներին, որոնք փորձում են ուրանալ այն ամենը, ինչ կատարել են իրենց ոճրագործ նախնիները:

ԴԵՐԵՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱԶԳ

Միջազգային

Չեռնոբիլ. 25 տարի անց

1986 թ. ապրիլի 26-ին Չեռնոբիլի ատոմակայանում տեղի ունեցած վթարի զոհերի թիվը մինչեւ օրս անհայտ է: Այն ժամանակ ողբերգության մասին հաղորդել էր խորհրդային թերթերից միայն մեկը, այն էլ՝ վերջին էջի մի փոքրիկ լուրով: Միջադեպի ծավալների մասին աշխարհն իմացել էր մի քանի օր անց: Այդ օրերին Չեռնոբիլի վթարի դեմ մարտնչում էին հրշեջներ, զինվորականներ, կամավորներ՝ չպաշտպանվելով ճառագայթումից, որի մակարդակն այն ժամանակ չէին էլ պատկերացնում: Իսկ վարակված գոտուց բնակիչների տարհանումը սկսեցին վթարից 3 օր անց: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ ռադիոակտիվ ամպը ծածկել է ոչ միայն Ուկրաինան, Բելառուսը եւ Ռուսաստանը, այլեւ Արեւելյան եւ Հյուսիսային Եվրոպայի երկրները:

Չեռնոբիլի ԱԷԿ-ի 4-րդ էներգաբլոկի պայթյունի հետեւանքով 1986-ի ապրիլին 30 կիլոմետր շառավղով ռադիոակտիվ վարակ տարածվեց: Ռադիոակտիվ աղտոտումից տուժեց ՌԴ 19 տարածաշրջան 60 հազար քառ. կմ տարածքով եւ 2,6 մլն բնակչությամբ, 46,5 հազար քառ կմ բելառուսական տարածք (Բելառուսի մակերեսի 23 տոկոսը): Ուկրաինայի 12 մարզերում աղտոտման ընդհանուր մակերեսը 50 հազար քառ. կմ էր: Ատոմակայանի աշխատանքը դադարեցվեց 2000 թ. դեկտեմբերի 5-ին:

«Չորրորդ էներգաբլոկը ծածկող սարկոֆագի անվտանգ վիճակի երաշխիքային ժամկետը 30 տարի է, այսինքն մոտ 5 տարի հետո այն կարող է պիտանի չլինել ավերված ռեակտորից ռադիոակտիվ նյութերի ելքը «կասեցնելու» համար: Ուստի նոր սարկոֆագի կառուցման հարցը խիստ հրատապ է», նշում է ՌԻԱ գործակալությունը:

Ուկրաինայի իշխանություններն ուզում են Չեռնոբիլի ատոմակայանն անվտանգ համակարգ դարձնել «Թաֆուսնգ» օբյեկտի միջոցով: Դա լինելու է 105 մետր բարձրությամբ, 150 մետր երկարությամբ եւ 260 մետր լայնությամբ կամարաձեւ կառույց, որը ծածկելու է 4-րդ էներգաբլոկը եւ դրա (արդեն իսկ ճաք տված) սարկոֆագը:

«Մեծ յոթնյակի» երկրները վաղուց պահանջում են փակել Չեռնոբիլի ԱԷԿ-ը եւ խոստացել են գումար ապահովել «Թաֆուսնգ» օբյեկտի համար, բայց մինչեւ օրս ամբողջ գումարը հայթայթված չէ:

«Ազգը» անդրադարձել է հինգ տասնյակ երկրների ղեկավարների մասնակցությամբ Կիեւում օրերս կայացած միջազգային կոնֆերանսին, որի նպատակը նոր սարկոֆագի կամ «Թաֆուսնգ» օբյեկտի կառուցմանն ուղղված միջոցների հանգանակումն էր: Կոնֆերանսի ավարտից հետո Ուկրաինայի նախագահ Վիկտոր Յանուկովիչը հայտնեց, որ հաջողվել է հայթայթել 550 մլն եվրո (այդքան էին խոստացել հանդիպման մասնակից երկրներն ու կազմակերպությունները): «Թաֆուսնգ» նախագծի իրականացման համար անհրաժեշտ է առնվազն 740 մլն եվրո:

Հայերի դեմ պարտավոր են պայքարել նույնիսկ մեռածնե՞րը

Ադրբեջանում բոլորը պարտավոր են պայքարել «հայ ծայրահեղականների, ահաբեկիչների, անջատողականների, պատմության կեղծարարների, մշակութային կողոպտիչների», մի խոսքով՝ հայ ժողովրդի եւ ամեն հայկականի դեմ: Այդպես է պահանջում իշխանությունը:

Այդ նպատակին պիտի ծառայեն ոչ միայն ողջերը, այլեւ մեռածները: Սա ամենեւին էլ չափազանցություն կամ սեւ հումոր չէ:

Ապրիլի 23-ին հանկարծամահ է եղել խորհրդարանի նախկին պատգամավոր, Ուրախների եւ հնարամիտների ակումբի ադրբեջանական թիմպարես Անար Մամեդխանովը: Ըստ պաշտոնական տեղեկատվության, մահը վրա է հասել «արտամկանի սուր անբավարարության եւ սրտի իշեմիկ հիվանդության պատճառով»:

41- ամյա քաղաքական եւ մշակութային-հանրային գործչի մահը, սակայն, զանազան ենթադրությունների տեղիք է տվել: «Էխո» պարբերականի խմբագիր Ռաուֆ Թալիշինսկին մասնավորապես ասել է, որ այդ օրը ժամը 1-ի սահմաններում ինքը տեւական հեռախոսազրույց է ունեցել Անար Մամեդխանովի հետ, որի ընթացքում վերջինս ուրախ կատակել եւ պատմել է աղագա ծրագրերից: «Երկու ժամ անց ինձ զանգեցին եւ հայտնեցին, որ Անարը վախճանվել է: Ինձ թվաց, թե դա հիմար կատակ է, բայց շուտով ինտերնետում կարդացի նույն լուրը: Ես ցնցված էի: Մինչեւ հիմա էլ ցնցված եմ: Ինչպե՞ս կարող էր երկու ժամ առաջ ինձ հետ կատակող մարդը մեռնել»,- տարակուսել է նա:

Մեկ այլ լրագրող՝ news.az-ի խմբագիր Էլնուր Բաիմովն էլ պատմել է, որ «անցյալ տարեվերջին Անարը Գերմանիայում հիմնովին բուժզննում է անցել եւ ոչ մի բողոք չուներ»: Ենթադրությունների պատճառն այն է, որ Մամեդխանովի կինը, ի հակակշիռ հանգուցյալին նույն օրը հողին հանձնելու մահմեդական ավանդույթի, պահանջել է դիահերձում եւ մահվան պատճառների մասին պաշտոնական եզրակացություն, ինչը եւ արվել է:

Այդուհանդերձ, սոցիալական ցանցերում Անար Մամեդխանովի մահվան շուրջն առաջ են քաշվել տարբեր վարկածներ: Խոսվել է հատկապես այն մասին, որ նա, երեւ անգամ անընդմեջ ընտրված լինելով խորհրդարանի պատգամավոր, անցած աշնանը զրկվել է իշխանության աջակցությունից: Ակնարկվել է, որ Մամեդխանովը տարիներ շարունակ ջերմ հարաբերություններ է ունեցել Իլհամ Ալիեւի հետ, եւ վերջինիս վերաբերմունքի փոփոխությունը ծանր է ազդել նրա հոգեվիճակի վրա: «Թող նրա գերեզմանը գայլերն ու ագռավները քրքրեն»,- գրել է ադրբեջանցի մի բլոգեր՝ ավելացնելով, որ Անար Մամեդխանովը եղել է իշխանությունների քաղաքական սպասավորը:

Այս իրավիճակում, սակայն, Մամեդխանովի հարազատները, փոխանակ հանգուցյալի մարդկային կամ մասնագիտական բարեմասնությունները շեշտելու, ընտրել են «մեծարման» մի տարբերակ, որը պարզապես խղճահարություն է հարուցում: Նրա որդին լրատվամիջոցներին հայտնել է, որ «Անարը հայերին ծաղրող երգիծական գրվածքներ ունի, որոշել եմ դրանք տպագրել առանձին գրքով»:

Թե ի՞նչ է տալու այդ «գիրքը», գուշակելը դժվար չէ. Մամեդխանովը մեկ անգամ չէ, որ «կվնշչիկ»-ին հատուկ «ոճով» պարբերական մամուլում հանդես է եկել հակահայկական հրապարակումներով: Եվ եթե դրանք կենդանության օրոք նրան չեն ապահովագրել իշխանությունների անբարեհաճությունից, իսկ հասարակությանը չեն ներշնչել «երգիծաբանի տաղանդի» հանդեպ ակնածություն, ապա հազիվ թե «գրքի» տեսքով օգնեն արդեն հանդերձյալ աշխարհ տեղափոխված հեղինակին:

Պարզապես ցավալի է, որ Մամեդխանովի հարազատները, հավանաբար ոչ առանց իշխանությունների աջակցության, փորձում են նրա հակասական կերպարը ողողակել հակահայկական պայքարի «առաջամարտիկներից մեկի» քողամիդով: Գերադասելի չէ՞ր, որ նա ադրբեջանցիների հիշողության մեջ մնար որպես նոր դարաշրջանի «ուրախներից եւ հնարամիտներից» մեկը, որն իր կյանքն ավարտել է վերջին «կատակով»:

ՎԱՀԲԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Նատո-ն հարվածել է Քադդաֆիի նստավայրին

Երեկ գիշեր ՆԱՏՕ-ն 5 հրթիռ է արձակել Լիբիայի մայրաքաղաք Տրիպոլիի արեւելյան մասի վրա: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրեսը՝ վկայակոչելով տեղաբնակներին: Հրթիռներն ընկել են Այն Զարայի շրջանում:

Ավելի վաղ ՆԱՏՕ-ի օդուժը հարվածել էր Լիբիայի ղեկավար Մուամմար Քադդաֆիի նստավայրին, որը Տրիպոլիի մոտակայքում է՝ «Բաբ ալ Ազիզիա» ռազմակայանում: Ռմբակոծությունից սաստիկ վնասվել էր մի քանի շենք: Վնասված շենքերից մեկում գտնվում էր Քադդաֆիի վարչակազմը, մեկ ուրիշում անցկացվում էին խորհրդակցություններ: Լիբիայի իշխանությունների տվյալներով, ռմբակոծության հետեւանքով զոհվել են 3 եւ վիրավորվել 45 անձինք:

Իշխանությունները Քադդաֆիի նստավայրի ռմբակոծությունն անվանել են նրա դեմ ուղղված «անհաջող մահափորձ»: Նշվում է, որ Լիբիայի ղեկավարը «ներկայումս Տրիպոլիում է՝ ապահով տեղում»:

Լիբիայի վրա թռիչքազերծ գոտու ստեղծման վերաբերյալ ՄԱԿ-ի ԱԽ ընդունած բանաձեւը մարտի 19-ից հիմք է ծառայում կոալիցիոն ուժերի օդային հարվածների համար: Մարտի 31-ից Լիբիայում գործողություններն իրականացվում են ՆԱՏՕ-ի հրամանատարությամբ:

BBC-ն հաղորդում է, որ Իտալիայի վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնին ապրիլի 25-ին իր երկրի օդուժին թույլատրել է միանալ Լիբիայում ՆԱՏՕ-ի ռազմական գործողություններին: Իտալական ռազմօդանավերը «կետային» հարվածներ կհասցնեն Քադդաֆիի կողմնակիցների ռազմական օբյեկտներին:

ՄՈՍԿՎԱ

Պուտինի ելույթը Պետդումայում որպես նախընտրական ծրագիր

Վերջերս Մոսկվայում գտնվող ԱՄՆ-ի փոխնախագահ Ջո Բայդենը, ընդունելով Ռուսաստանի ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչներին, պատմել էր, թե Վլադիմիր Պուտինի հետ հանդիպման ժամանակ նրան խորհուրդ է տվել իր թեկնածությունը չառաջադրել գալիք նախագահական ընտրություններում, իբր նա «հնացել է»: Ցավոք, Բայդենը չի ասել, թե ինչ է պատասխանել ներկայիս վարչապետը: Նման պարագայում սրամիտ ու սրախոս Պուտինը կարող էր անսեթեւեթ առարկել՝ մի խցկվեք մեր ներքին գործերին (մի այլ առիթով նա ամերիկացիներին հենց այդպես էր դիմել):

Ահա եւ կառավարության գործունեության վերաբերյալ Պետդումայի առջեւ Պուտինի ամենամյա հաշվետվությունը շատերի համար հրապարակ էր այն իմաստով, թե վարչապետը ի վերջո կհայտարարի՞ առաջիկա նախագահական գոտեմարտին իր մասնակցության մասին: Մանավանդ որ նրա տեւական ելույթը ինչ-որ տեղ վերածվեց ակնհայտ նախընտրական քարոզչության: Պուտինը փաստորեն իր վրա վերցրեց Ռուսաստանը ֆինանսական ճգնաժամից դուրս բերելու հետ կապված բոլոր հաջողությունները, առաջադրեց սոցիալական հարցերը լուծելու, երկրի պաշտպանական հզորությունը բազմապատկելու, ժողովրդագրական աղետալի վիճակը շտկելու եւ առհասարակ երկրի էկոնոմիկան առավելագույն հզորացնելու առաջնակարգ խնդիրներ: Եվ ամենահատկանշականը՝ նա խոսում էր առաջիկա տասը տարվա ծրագրերից, թեեւ հատկապես մամլո ծառայողներին հիասթափեցրեց՝ այդպես էլ չբացահայտելով իր մերձակա կոնկրետ մտադրությունները:

Իրոք, վարչապետն ու կառավարող կուսակցության լիդերը ռուսաց խորհրդարանում իրեն այնպես էր պահում, ասես երկրի իրական ղեկավարն ինքն է եւ ոչ մեկ ուրիշը: Մեդվեդեւի մասին հիշատակումները կողմնակի բնույթ էին կրում: Իսկ հանդես գալով «լիբերալ տնտեսափորձերի», «չարդարացված լիբերալիզմի» դեմ, Պուտինը փաստորեն յուրօրինակ մարտահրավեր նետեց լիբերալ հռչակված նախագահին:

Պուտինը գրեթե խորհրդային (հակիմպերիալիստական) ոգով էր դատողություններ անում արտասահմանյան չարակամների մասին, չնայած չնշեց, թե ինչ երկրներ նկատի ունի: Նրա համար գաղտնիք չէ, որ Արեւմուտքը հակված է դեպի լիբերալ Մեդվեդեւը (Բայդենն էլ իր անձնական կարծիքը չէր հայտնում): Եվ պատահական չէր, որ Պուտինը, մերժելով ռուսների ժողովրդագրական «մարման», ոչ ռուս ժողովուրդներին (ներգաղթողներին) չդիմակայելու անկարողության եւ համանման այլ կարծիքները, ինչ-որ տեղ փոխ առավ այն նացիոնալիստական կարգախոսները, որոնք ազդեցության իմաստով բավականին արդյունավետորեն օգտագործում են ծայրահեղ աջերը: Կրեմլ տանող ճանապարհին ամեն ինչ թույլատրելի է:

Ճիշտ է, ե՛ւ Մեդվեդեւը, ե՛ւ Պուտինը հաճախ են արտահայտվում նաեւ նախագահի այլ թեկնածուների մասին (Զյուգանովն արդեն հիշեցրել է իր մասին), սակայն ե՛ւ Ռուսաստանում, ե՛ւ նրանից դուրս բոլորն են հասկանում, որ իրականում երկրի բարձրագույն քաղաքական պաշտոնին կարող են հավակնել միայն հիշյալ երկուսը: Ընդ որում, եթե երկրյակն առայժմ չի բացառում իրենցից յուրաքանչյուրի մասնակցությունը ընտրություններին, ապա խոսք չկա երկրյակի միասնական թեկնածուի (մեկնումեկի) մասին: Փորձագետները համոզված են, որ եթե երկուսն էլ միաժամանակ մասնակցեն նախագահական մրցավազքին, ապա կհաղթի Պուտինը: Այսինքն, Պուտինի կամքին հակառակ Մեդվեդեւը չի կարող շահել ընտրությունները:

Ինչեւէ, վերլուծաբանների կարծիքով, երկու առաջատար քաղաքական դեմքերը առայժմ զբաղված են իրենց նախընտրական «բանակները» ձեւավորելու մտադրություններով: Մեդվեդեւը իր շուրջն է համախմբում լիբերալներին, Պուտինը՝ պահպանողականներին, թեեւ դրանց միջեւ ընտրողների մեծ մասը հազիվ թե էական տարբերություններ տեսնի: Պայքար կծավալվի երկու անհատականությունների միջեւ, որոնք դեռ ժամանակ ունեն:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

Ամերիկացի դիվանագետները հեռանում են Սիրիայից

Քննարկվում են նոր պատժամիջոցներ

ԱՄՆ պետդեպարտամենտը կարգադրել է Սիրիայից տարհանել ամերիկյան դեսպանատան աշխատակիցների մեծ մասին, ինչպես նաեւ նրանց ընտանիքների բոլոր անդամներին: Ռոյթեր գործակալության տվյալներով, Դամասկոսում կմնան դեսպանատան միայն հիմնական աշխատակիցները: Մյուս աշխատակիցների եւ նրանց ընտանիքների տարհանման պատճառը, ըստ պետդեպարտամենտի, Սիրիայի «անկայուն իրադրությունն է»:

Նաեւ հաղորդվում է, որ ի հավելումն 2004-ից Սիրիայի դեմ կիրառվող արտահանական եւ ֆինանսական պատժամիջոցների, ԱՄՆ ֆինանսների նախարարությունը պատրաստում է իրավախախտումների մեջ մեղադրվող սիրիացի բարձրաստիճան պաշտոնական անձանց ցուցակ: Պատժամիջոցների նոր փաթեթով նախատեսվում է սառեցնել այդ անձանց ակտիվները, արգելել նրանց մուտքը ԱՄՆ եւ գործարար հարաբերություններն ամերիկյան ընկերությունների հետ:

Մարտի կեսերին Դերաա քաղաքում ծայրահեղականների սկսած հակակառավարական ելույթները ավելի ուշ տարածվեցին Սիրիայի այլ քաղաքներում: Ընդդիմադիր ֆունդամենտալիստների ներկայացուցիչները նշում են, որ ցուցարարների հետ ոստիկանների եւ զինվորականների բախումների հետեւանքով կան բազմաթիվ զոհեր եւ վիրավորներ: Ապրիլի 25-ին Դերաա են բերվել զորքեր եւ ծանր զրահատեխնիկա: Բանակի հրամանատարության ներկայացուցիչների խոսքերով, դա արվել է քաղաքացիների խնդրանքով՝ նրանց «ծայրահեղական ահաբեկչական խմբերից պաշտպանելու» նպատակով:

Չնայած նախագահ Բաշար Ասադը անցյալ շաբաթ չեղյալ հայտարարեց երկրում 1963-ից հաստատված արտակարգ դրությունը, բայց չարտոնված ցույցերի անցկացումը դարձյալ չի թույլատրվում:

«Ամերիկայի ձայն» ռադիոկայանը հաղորդում է, որ նախագահ Բարաք Օբաման՝ ապրիլի 25-ին հեռախոսով զրուցել է Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ: Օբաման խոսել է Սիրիայում վարչակարգի փոփոխման նպատակահարմարության մասին: Էրդողանը հավանություն է տվել այդ գաղափարին, մինչդեռ հայտնի է, որ Թուրքիան վերջերս ներկայանում էր իբրեւ Սիրիայի «բարեկամ» եւ նույնիսկ փորձում էր միջնորդ դառնալ Սիրիա-Իսրայել հաշտության բանակցություններում:

Մշակույթ

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Յակոբ Կյունցլերի «Արյան եւ արցունքների երկրում» գիրքը հայերեն

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը հայերեն թարգմանությամբ ներկայացնում է ժվեյցարացի միսիոներ Յակոբ Կյունցլերի «Արյան եւ արցունքների երկրում» գիրքը, որը սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող աշխատություն է, որտեղ նկարագրվում են Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Ուրֆայում տեղի ունեցած իրադարձությունները: Հեղինակը գրում նկարագրվող դեպքերի անմիջական ականատեսն է, ինչը էլ ավելի արժեքավոր է դարձնում այս հուշագրությունը Հայոց ցեղասպանության իրականացման դրվագները ուսումնասիրողների համար:

1899 թ. գալով Ուրֆա՝ Յ. Կյունցլերն աշխատանքի է անցնում «Գերմանական առաքելություն Արեւելքում» կազմակերպության հիվանդանոցում՝ որպես ժվեյցարացի բժիշկ Հերման Քրիստի օգնական: Առաջին աշխարհամարտի տարիներին նա միակն էր, որ ունակ էր բժշկական օգնություն ցույց տալ Ուրֆայի եւ շրջակա բնակավայրերի բնակչությանը:

Յակոբ Կյունցլերին եւ նրա կնոջը՝ Էլիզաբեթին հաջողվում է պատերազմի տարիներին բազմաթիվ հայերի փրկել վերահաս մահվանից:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, արեւելագետների, ինչպես նաեւ ընթերցողների լայն շրջանակի համար:

Յակոբ Կյունցլերը ծնվել է 1871 թ. մարտի 8-ին Շվեյցարիայի Հունդվիլ գյուղում: Դառնալով հիվանդապահների բողոքական եղբայրության անդամ՝ նա աշխատանքի է անցնում Բազելի հիվանդանոցներից մեկում, որտեղ էլ ծանոթանում է բժիշկ Հերման Քրիստի հետ: Շուտով վերջինս Յոհաննես Լեփսիուսի ղեկավարած «Գերմանական առաքելություն Արեւելքում» կազմակերպության կողմից գործուղվում է Ուրֆա: Նրա հրավերով 1899 թ. Կյունցլերը եւս ժամանում է Ուրֆա՝ դառնալով Քրիստի օգնականը:

Արմին Թ. Վեգներ Ցեղասպանության լուսանկարիչ



Հայտնի կինոռեժիսոր Տիգրան Խզմալյանի «Արմին Թ. Վեգներ. Ցեղասպանության լուսանկարիչ» փաստագրական կինոժապավենը Իրանում թարգմանվեց պարսկերեն լեզվով եւ DVD սկավառակի տեսքով տարածման մեջ է:

Հայ ժողովրդի մեծ բարեկամ Արմին Թ. Վեգների լուսապատկերները հայերի դեմ գործադրված ցեղասպանության փաստագրման եզակի նմուշներ են:

Վանա կատուն «World Children's Gams» փառատոնի խորհրդանիշ

Ապրիլի 24-ին Թուրքիայի մայրաքաղաքի «ԱՐԵՆԱ» մարզադպրոցում տեղի ունեցավ «World Children's Gams» փառատոնի հանդիսավոր բացումը: Խաղերը անց են կացվում առաջին անգամ, կազմակերպիչն է Անկարայի քաղաքապետարանը եւ Թուրքիայի սպորտի նախարարությունը: Հանդիսավոր բացմանը ներկա էր Թուրքիայի վարչապետ Էրդողանը: Խաղերին մասնակցում էին 90 երկրների 1997-98 թթ. ծնված դեռահասներ:

Այս միջոցառմանը Հայաստանը ներկայացված էր ձյուդոյի հավաքական կազմով թվով 14 մարզիկ, 4 մարզիչ եւ 2 ղեկավար, ինչպես նաեւ մեծ թենիսից 2 տղա եւ 2 աղջիկ իրենց մարզիչներով: Ապրիլի 25-ից իրենց ելույթները սկսեցին թենիսիստները, իսկ ձյուդոիստները տասամի դուրս կգան ապրիլի 28-29-ին:

Անկարայից.
ՀՀՖ փոխնախագահ
Դավիթ Խիքարյան

Յուրաքանչյուր վանեցի ասելու է. «Սա մեր կատու ի»...

«Ազգային պատկերասրահ» միջազգային երաժշտական փառատոնը նվիրվում է Էդվարդ Միրզոյանի 90-ամյակին

Երաժշտասերների սիրած «Արվեստների պատկերասրահ» միջազգային երաժշտական փառատոնը այս տարի կմեկնարկի ապրիլի 28-ից մայիսի 31-ը: Թվով յոթերորդ փառատոնը. «Արվեստների պատկերասրահ» մշակութային հիմնադրամը բոլոր վեց համերգները նվիրել է փառատոնի գեղարվեստական խորհրդի նախագահ, կոմպոզիտոր, ԽՍՀՄ ժող. արտիստ Էդվարդ Միրզոյանի ծննդյան 90-ամյա հոբելյանին:



«Ազգը» զրուցեց փառատոնի եւ հիմնադրամի նախագահ **Մարիամ Շահինյանի** հետ ու տեղեկացավ, որ փառատոնի շրջանակներում ելույթներ կունենան հայտնի երաժիշտներ ինչպես Հայաստանից, այնպես էլ արտասահմանից՝ Ալեքսանդր Բրուսիլովսկին-ջութակ (Ֆրանսիա), Նիկոլայ Մադոյանը-ջութակ (Գերմանիա), Հակոբ Ջաղացպանյանը- կիթառ, Գլեբ Կարպուշկինը- գալարափող (Ռուսաստան), կոմպոզիտոր եւ դիրիժոր Հուշյար Խայամը (Իրան), Սվետլանա Նավասարդյանը-դաշնամուր, Հայկ Մելիքյանը-դաշնամուր, Կարեն Շահգալդյանը-ջութակ, Յանա Դարյանը-ալտ, Ջուլիետա Վարդանյանը-դաշնամուր, նաեւ «Հայաստանի պատանի տաղանդներ» Լոնդոն-Երեւան ծրագրի մասնակիցները, փառատոնի կամերային նվագախումբը գեղ. ղեկ եւ դիրիժոր Արամ Թալալյանի գլխավորությամբ:

Փառատոնի առաջին համերգի ընթացքում կհնչեն Էդվարդ Միրզոյանի կամերային ստեղծագործությունները՝ «Պոեմ», «Ալբոմ թոռնիկիս», «Ջորս երգ» (չինական պոեզիայի հիման վրա) երգչուհի Հասմիկ Բաղդասարյանի կատարմամբ եւ «Պոեմ-էպիտաֆիա», «Թեմա եւ վարիացիաներ»՝ գրված լարայիններ համար:

Ինչպես նշեց երաժշտագետ Մարիամ Շահինյանը, «փառատոնի հիմնական նպատակն է հանրահայտ, ինչպես նաեւ Հայաստանում ճանաչում չունեցող հայ եւ օտարազգի տաղանդաշատ երաժիշտ-կատարողների, ստեղծագործական կոլեկտիվների կատարմամբ հայ եւ համաշխարհային դասական երաժշտարվեստի նմուշների ներկայացումը արվեստասեր հասարակությանը»: Համերգները կայանում են Հայաստանի ազգային պատկերասրահի Որմնանկարների սրահում, որով հանրության լայն շերտերի համար պատկերասրահի գլուխգործոցներին ծանոթանալու հնարավորություն է ստեղծվում:

Փառատոնի վերջին համերգի եւ հանդիսավոր փակման ընթացքում կնշվի Արամ Թալալյանի ծննդյան 40-ամյակը:

Տկն Շահինյանը պատասխանելով **«Ազգի»** հարցին, ասաց, որ այս տարի փառատոնի շրջանակներում մարզերում համերգներ չեն լինի, քանի որ փառատոնի փակումից անմիջապես հետո կմեկնարկի «Ալտի եւ թավջութակի» հերթական փառատոնը, որի մեկնարկը ու հանդիսավոր բացումը կկայանա Գավառում: Իսկ աշնանը կմեկնարկի «Վերադարձի» փառատոնը: Ինչպես միշտ, փառատոնը (2006-ից) հնարավոր է դառնում իրականացնել Վիվասել-ՄՏՍ ընկերության հովանավորության եւ հոգատարության շնորհիվ:

Չնայած որ փառատոնը մշտապես անցնում է գեղեցիկ ու բարձր մակարդակով, սակայն ըստ կազմակերպիչների՝ դեռ չեն լուծվել սրահի աթոռների հարցը եւ ամեն անգամ տարբեր կազմակերպություններից են հավաքվում դրանք: Մյուս խնդիրը կապված է պեսական կամերային եւ սիմֆոնիկ նվագախմբերի հետ, որոնք մասնակցության համար բարձր գումարներ են պահանջում: Մինչդեռ, փառատոնի կամերային նվագախումբը (գեղ. ղեկ եւ դիրիժոր Արամ Թալալյան) դժգոհ չէ առաջարկվող գումարից:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Ռ. Կարայանի նոր գրքի շնորհանդեսը

Օրերս Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանի հյուրընկալ դահլիճը նորից լեփ-լեցուն էր հայ մտավորականության ներկայացուցիչներով:

Այս անգամ առիթը արձակագիր, հրապարակախոս Ռոբերտ Կարայանի «Մարդազարդի տոն արարեք» գրքի շնորհանդեսն էր:

Հեղինակին շնորհավորեցին բանասիրական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Լյուդվիգ Կարապետյանը, անվանի ռեժիսոր Ալբերտ Մկրտչյանը, քանդակագործ Լեւոն Թոքմաջյանը, որ նաեւ իր հրաշալի երգով հիացրեց բոլորին, ռեժիսոր Հրաչյա Աշուղյանը, իրավաբան Պուշկին Սերոբյանը, ՀՀ վաստակավոր արիստ, սիրված դերասան Երվանդ Մանարյանը, գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, Հայ աշուղների միության նախագահ Շավիղ Գրիգորյանը, նկարիչ Հենրիկ Մամյանը, որի աշխատանքները նկարազարդել են Կարայանի մի շարք գրքեր եւ այլք: Մանկության ընկերներն ու հասուն տարիքի գործընկերներն իրենց սրտից բխող ջերմ խոսքեր հղեցին հեղինակին:

Բոլոր ելույթներում ընդգծվում էր հատկապես այն փաստը, որ մենք գործ ունենք քաղաքացիական ազնիվ կեցվածքի տեր, հայրենասեր հայի հոգատար եւ մարտնչող տեսակի հետ, որի անունն է Ռոբերտ Կարայան: Նրա ստեղծագործությունները անհրաժեշտություն են հայ ընթերցողի համար՝ պահանջված եւ սպասված: Բացառություն չէ նաեւ նոր գիրքը՝ «Մարդազարդի տոն արարեք»: Կարծիքներ հնչեցին այն մասին, որ Ռ. Կարայանի վեպերը կարող են դառնալ հրաշալի ֆիլմեր՝ ի հեճուկս մշակութային արժեք չներկայացնող այժմյան սերիալների եւ կարող են մատաղ սերնդի դաստիարակության հզոր զենք հանդիսանալ:

Շնորհավորական ելույթները պարբերաբար ընդհատվում էին դերասանուհի Գայանե Սամվելյանի ընթերցումներով, որ հրաշալի կերպով ներկայացրեց Ռոբերտ Կարայանի ստեղծագործությունները:

Ավ. Իսահակյանի անվան ԿԳ-ի հասարակայնության հետ կապերի բաժին

Մելիքյանի գիրքը՝ եզրափակիչ փուլում

«Մելիքյանի «Ճանապարհ դեպի խորան» գիրքը՝ հափշտակությամբ ընթերցվող, հիանալիորեն գրված ստեղծագործություն է, «կիզիչ» մեկնաբանություն աշխարհի եւ նրա բնակիչների մասին: Հեղինակի գրելու աղբեցուցիչ տաղանդը եւ աշխարհի պատմությունը նոր տեսանկյունից դիտելու նրա կարողությունը հետաքրքրական ճանապարհորդության են մղում ընթերցողին դեպի պատերազմող կրոններ, մշակույթներ, սեռեր եւ պատմական իրադարձություններ:

Նա աշխարհի եւ մարդկային վիճակների ու հանգամանքների մասին պատմում է ողբերգության եւ հումորի միջոցով», նշել է «ForeWord Review» հանդեսի խմբագրության ակնառու անդամներից Լեյա Մենլովը, հրապարակելով 2010 թվականի «Տարվա գիրք» մրցանակին հավակնող 1400 գրքերից եզրափակիչ փուլ հասածների ցուցակը:

Գեղարվեստական արձակ գրականություն անվանակարգում առաջադրված լոսանջելեսցի գրող Արմեն Մելիքյանի անդրանիկ վեպը հրատարակվել է Հիլկրեստ հրատարակչական «Two Harbors Press»-ի կողմից: Գիրքը, ըստ «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի փոխանցմամբ, «որոշ առումով հիշեցնում է Ջեյմս Ջոյսի, Ումբերտո Էկոյի եւ նրանց նմանների վիպական առանձնահատկությունները իր եռուն ոճով եւ նորարարական բառաղաշարով»:

Մելիքյանը միջազգային հարաբերությունների գծով մագիստրոսի աստիճան է ստացել Վաշինգտոնի Ամերիկյան համալսարանից: Նաեւ սովորել է Հարվարդում, բայց գիտությունն ու քաղաքականությունը մի կողմ թողնելով զբաղվում է գրականությամբ:

Իսկ «Foreword Review» պարբերականը 1998-ից սկսած հրատարակվում է տարեկան 6 անգամ եւ ուղարկվում 26 հազար գրադարաններ եւ գրախանութներ: Համարվում է ամենահեղինակավոր պարբերականը գրքերի արժեվորման եւ տարածման ոլորտում: «Տարվա լավագույն գիրք» մրցանակը հիմնվել է խրախուսելու համար հատկապես անկախ հրատարակչատների գործունեությունը: Մրցանակին արժանի թեկնածուները ընտրվում են փորձառու գրադարանավարների եւ գրավաճառների կողմից, որոնք ամեն օր գործ ունեն ընթերցողների հետ:

Հ. Ծ.

ՀԲԸՄ-ի բազմամշակութային համերգը Սոֆիայում

Բուլղարիայում Լիբանանի դեսպան Միշելին Աբի Սամրայի բարձր հովանավորությամբ Սոֆիայի Ազգային երաժշտական ակադեմիայում մարտի 13-ին տեղի է ունեցել ՀԲԸՄ-ի Սոֆիայի մասնաճյուղի կամերային նվագախմբի գարնանային առաջին համերգը, որը ներկաները որակել են բազմամշակութային, քանի որ դրանում ներառված են եղել հայկական, լիբանանյան եւ բուլղարական ստեղծագործություններ, ստեղծելով համերաշխության ու բարեկամության ինքնատիպ մի մթնոլորտ:

Ըստ այդ առթիվ Նյու Յորքից ստացված ՀԲԸՄ-ի հաղորդագրության՝ երեկոյի բացման խոսքում ողջույնի խոսքեր են ուղղվել ինչպես Լիբանանի, այնպես էլ Բուլղարիայում Հայաստանի նորանշանակ դեսպանի հասցեին: Ներկայացվել են Ալեքսանդր Սպենդիարյանի եւ բուլղարացի երգահան Ռոսեն Բալկանսկու գործերը: Ծրագրին մասնակցել են Լիբանանից հրավիրված մենակատարներ Ֆադի Ռաշիդն (կիթառ) ու Շադի Էսբերը (ուդ):

Այս եւ տարվա ընթացքում կայանալիք մյուս համերգները նվիրված են Հայաստանի անկախության խնամյակին:

Հ. Ծ.

Դարչինյանը հաղթանակը նվիրեց ցեղասպանության զոհերի հիշատակին

Վախթանգ Դարչինյանը հաղթանակով ավարտեց կոլումբիացի Յոնի Պերեսի հետ Լոս Անջելեսում կայացած մենամարտը ու թեթեւագույնքաշային 4 ուժեղագույն բռնցքամարտիկների մրցաշարում գրավեց 3-rդ տեղը: Նա նաեւ նվաճեց թեթեւագույն քաշային կարգում IBO-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը, որը նրա մարզական կարիերայում չեմպիոնական 8-rդ գոտին էր:

Ստացվել էր այնպես, որ Վախթանգը պետք է ռինգ դուրս գար Երեւանի ժամանակով ապրիլի 24-ի վաղ առավոտյան: Ինչպես մենամարտից հետո խոստովանել էր Դարչինյանը, դա կրկնակի պատասխանատվություն էր: Հայ բռնցքամարտիկը ռինգ էր դուրս եկել գոտկատեղին «1915» մակագրությամբ: Նույնպիսի մակագրությամբ ու եռագույն դրոշներով բազմաթիվ հայեր էին եկել մարզադահլիճ՝ աջակցելու Վախթանգին: Եվ Դարչինյանը հուսախաբ չարեց իր երկրպագուներին:

Նա շատ ակտիվ սկսեց մենամարտը՝ անընդհատ դիմելով գրոհների, ինչի որ խոստացել էր մրցակցին հաղթել նոկաուտով: Արդեն 2-rդ ռաունդում Պերեսը հայտնվեց նոկդաունում: 5-rդ ռաունդում մրցակիցները գլուխներով բախվեցին, որի հետեւանքով Պերեսի մոտ արյունահոսություն սկսվեց: Մրցավարը դադարեցրեց մենամարտը: Այդ պահին Դարչինյանն առավելություն ուներ, ուստի 3 մրցավարներն էլ ընդհանուր 50-44 հաշվով հաղթանակը շնորհեցին Վախթանգին:

Պրոֆեսիոնալ ռինգում այդ մենամարտը Դարչինյանի համար 40-rդն էր: Նա տոնեց 36-rդ հաղթանակը: Մյուս չորս մենամարտերից մեկն ավարտվել է ոչ-ոքի, 3-ում Դարչինյանը պարտվել է:

«Ապրիլի 24-ին մենամարտելը ինձ համար կրկնակի պատասխանատու էր, ուստի ամեն կերպ հարկավոր էր հաղթանակած դուրս գալ ռինգից: Դա ինձ հաջողվեց: Հաղթանակը նվիրում եմ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Ցանկանում էի նոկաուտով հաղթել մրցակցիս, որը հիանալի բռնցքամարտիկ է: Ցավոք, 5-rդ ռաունդում գլուխներով բախվեցինք ու մենամարտը դադարեցվեց, այլապես 1-2 ռաունդ հետո անպայման նոկաուտի կենթարկեի Պերեսին: Այժմ պատրաստ եմ թեթեւագույնքաշային կարգի յուրաքանչյուր բռնցքամարտիկի հետ մենամարտել: Կցանկանայի հանդիպել Աբներ Մարեսի հետ: Եթե դա չհաջողվի, ապա Նոնիտո Դոնեռի հետ կցանկանայի մենամարտել: Մեր նախորդ մենամարտից արդեն 4 տարի է անցել, Դոնեռն իմ նկատմամբ տոնած հաղթանակի շնորհիվ մեծ համբավ է ձեռք բերել: Սակայն ամեն անգամ նա տարբեր պատրվակներով խուսափում է իմ հետ մենամարտելուց: Եթե նրանք այս անգամ էլ հրաժարվեն, ապա կտեղափոխվեմ քաշային հաջորդ կարգ», մենամարտից հետո նշել է Վախթանգ Դարչինյանը:

«Պատրաստ էի շարունակել մենամարտը, դեռ նոր էի ռիթմի մեջ մտնում: Մենամարտի սկզբում զգացի, որ Դարչինյանն այնքան էլ ակտիվ չէր, ինչպես սպասում էի: Զգում էի, որ հանդիպման 2-rդ մասում կտիրեմ նախաձեռնությանը: Հիասթափված եմ, որ մենամարտն այսպիսի ավարտ ունեցավ: Եթե մրցավարը չդադարեցներ մենամարտը, կշարունակեի պայքարը: 2-rդ ռաունդում իսկապես նոկդաունում հայտնվեցի. Դարչինյանին հաջողվեց ցնցել ինձ: Այժմ կվերադառնամ Կոլումբիա, կհանգստանամ ու կմտածեմ իմ հետագա քայլերի մասին», նշել է Պերեսը:

Ռինգի բժիշկ Պոլ Ուոլեսը բացատրել է, որ Պերեսի վնասվածքը վտանգավոր էր, քանի որ անոթներից մեկը պայթել էր եւ արյունը աչքն էր լցվում: Նա նաեւ նշել է, որ Պերեսը մենամարտի դադարեցման մասին ոչինչ չի ասել:

«Ուլիսն» ամրապնդում է առաջատարի դիրքը

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 6-rդ տուրն աչքի ընկավ բարձր արդյունավետությամբ: Խփվեց 18 գնդակ, ինչն ընթացիկ առաջնությունում ռեկորդային ցուցանիշ է: Իր հաղթարշավը շարունակեց «Ուլիսը», որը տուրի կենտրոնական խաղում 3-2 հաշվով պարտության մատնեց «Միկային»: Առաջին խաղակեսում ուլիսցիները 2 անգամ գրավեցին «Միկայի» դարպասը: Նախ Արսակ Գրիգորյանը «պաս» խաղարկելով Արսյոմ Ադամյանի հետ, դուրս եկավ հարվածային դիրք ու գրավեց դարպասը: Այնուհետեւ Արսյոմ Ադամյանը հսկայական հրացրեց 11 մ հարվածը, որը նշանակվել էր Արսակ Գրիգորյանին վայր գցելու համար:

2-rդ խաղակեսի սկզբին օգտվելով «Միկայի» դարպասապահ Գեւորգ Կասպարովի կողքից սխալից, Շոթա Ջիքիան 3-rդ գոլը խփեց: Ի պատիվ «Միկայի», թիմը չընկճվեց ու դիմեց վճռորոշ գործողությունների, որի արդյունքում Աղվան Մկրտչյանի եւ Բեգլարյանի ջանքերով կրճատեց հաշիվը (3-2): Սակայն պարտությունից խուսափել «Միկային» չհաջողվեց, թեեւ խաղավերջում եղան գոլային պահեր: Սակայն մի դրվագում Նարեկ Բեգլարյանի հարվածից հետո գնդակը դիպավ ձողին, մի քանի անգամ էլ հաջող խաղաց «Ուլիսի» դարպասապահ Վլադիմիր Մալկովը:

Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

Արմեն Շահգելդյան («Միկա»)- **3 որ առաջ գավաթի ծանր խաղ էինք անցկացրել «Բանանցի» հետ, ուստի ֆուտբոլիստները չէին հասցրել լիովին վերականգնվել: Դրանից 4 որ առաջ էլ խաղացել էինք Կապանում: Այնպես որ հոգնածությունը զգալ տվեց, որի պատճառով ֆուտբոլիստները միշտ չէ, որ ուշադիր էին գործում, ինչն էլ սխալների պատճառ դարձավ:**

2-rդ խաղակեսն անցավ հետաքրքրական պայքարում: Գոհ եմ, որ ֆուտբոլիստներն իրենց մեջ ուժ գտան 2 գոլ խփելու, նաեւ կարող էին խուսափել պարտությունից: Իհարկե, տրամաբանական կլիներ, որ խաղն ավարտվեր ոչ-ոքի:

Սեւադա Արզումանյան («Ուլիս»)- **Թեեւ հաղթեցինք, սակայն թիմի գործողություններում թերություններ կային, որի պատճառով էլ մրցակցին հաջողվեց կրճատել հաշիվը: Հատկապես դժգոհ եմ խաղի վերջին 15 րոպեներում մեր թիմի ցուցադրած խաղից:**

«Բանանցին» կրկին չհաջողվեց հաղթել, թեեւ «Շիրակի» հետ խաղում առջեւում էր 2-0 հաշվով: Գոլերի հեղինակներ էին դարձել Վալտեր Պողոսյանն ու Բրունո Կորեան: Սակայն 2-rդ խաղակեսում ընդամենը 3 րոպեում Շիրակցիներ Կարեն Ն. Խաչատրյանն ու Անդրանիկ Բարիկյանը (11 մ) վերականգնեցին հավասարակշռությունը՝ 2-2:

«Արարատը» 5-rդ անընդմեջ պարտությունը կրեց՝ 1-4 հաշվով զիջելով «Փյունիկին»: Չեմպիոնի կազմում 2 գոլ խփեց Մարկոսը, մեկական անգամ աչքի ընկան Էդգար Մանուչարյանն ու Էդգար Մալաֆյանը: Արարատցիներից միակ գոլի հեղինակը Մխիթար Գրիգորյանն էր: Մանուչարյանը կարող էր նաեւ իր 2-rդ գոլը խփել, սակայն չիրացրեց 11 մ հարվածը:

Ոչ-ոքի արդյունք (2-2) գրանցվեց «Իմպուլս»-«Գանձասար» խաղում: Հաշիվը 62-rդ րոպեին բացեց «Իմպուլսի» հարձակվող Զավեն Բադոյանը: Սակայն հետագայում Վլադիմիր Մատիչն ու Նոա Կասուլեն առաջ մղեցին հյուրերին: «Իմպուլսը» պարտությունից խուսափեց ավելացված ժամանակի 4-rդ րոպեին, երբ «Գանձասարի» դարպասը գրավեց Արսակ Հովհաննիսյանը:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Ուլիս	6	5	1	0	13-4	16
2. Փյունիկ	6	4	1	1	11-6	13
3. Գանձասար	6	3	3	0	6-3	12
4. Միկա	6	2	2	2	8-6	8
5. Իմպուլս	6	2	1	3	8-8	7
6. Շիրակ	6	1	2	3	5-8	5
7. Բանանց	6	0	3	3	7-11	3
8. Արարատ	6	0	1	5	2-14	1

Ռմբարկուները

Գեորգի Կրասովսկի	«Ուլիս»	3
Նարեկ Բեգլարյան	«Միկա»	3
Արսյոմ Ադամյան	«Ուլիս»	3
Բրունո Կորեա	«Բանանց»	3
Մարկոս Պիզելի	«Փյունիկ»	3
Զավեն Բադոյան	«Իմպուլս»	3

ՊԱՏԱՇԱՐ

Նազիկ Ավդալյանն ավտովթարի է ենթարկվել

Երեկ ժամը 13-ի սահմաններում, Գյումրի-Վանաձոր ճանապարհին, Ջաջուռ գյուղի մոտակայքում իր անձնական մեքենայով վթարի է ենթարկվել ծանրամարտի 2009-ի աշխարհի չեմպիոնուհի Նազիկ Ավդալյանը: Այս լուրը հաստատեցին նաեւ ծանրամարտի Հայաստանի ֆեդերացիայում: Ըստ նախնական տեղեկությունների, Նազիկը ողնաշարի հատվածում է վնասվածք ստացել. կոտրվել է նրա մեկ կողը: Ավդալյանին անմիջապես տեղափոխել են Գյումրիի Գյուլբենկյանի անվան հիվանդանոց:

Նազիկ Ավդալյանը 2009-ին աշխարհի չեմպիոնուհու տիտղոսը նվաճելուց հետո վնասվածքի պատճառով բավական ժամանակ մրցահարթակ դուրս չէր եկել: Միայն այս տարվա փետրվարին նա վերջապես մասնակցեց Հայաստանի առաջնությանը՝ նվաճելով երկրի չեմպիոնուհու ոսկե մեդալը: Նազիկը չմասնակցեց վերջերս Կազանում կայացած ծանրամարտի Եվրոպայի առաջնությանը, որպեսզի լավ նախապատրաստվի նոյեմբերին Փարիզում կայանալիք աշխարհի առաջնությանը, որտեղ խաղարկվելու են 2012-ի Լոնդոնի ամառային օլիմպիադայի ուղեգրերը: Առայժմ դժվար է ասել, թե այս ավտովթարն ինչպես կանդրադառնա Նազիկի մարզական հետագա կարիերայի վրա: Առաջին հերթին մարզուհուն շատ արագ ապաքինում եւ առողջություն ենք ցանկանում:

Արկադի Անդրեասյանը հարվածել է ֆոտոլրագրողին

«Հրազդան» մարզադաշտում կայացած «Արարատ»-«Փյունիկ» հանդիպման ընդմիջմանը «Արարատի» գլխավոր մարզիչ Արկադի Անդրեասյանն ու նրան ուղեկցող անձինք ծեծել են Totalfootball.am-ի ֆոտոլրագրող Աշոտ Առուշանյանին: Վերջինս տեղեկացրել է, որ ցանկացել է լուսանկարել Անդրեասյանին, իսկ մարզիչը հայհոյելով հարվածել է նրա դեմքին, ապա ուղեկցող մի քանի անձինք սկսել են ծեծել նրան՝ պահանջելով ջնջել լուսանկարները:

Ֆոտոլրագրողը տեղափոխվել է հիվանդանոց: Պարզվել է, որ Առուշանյանի դեմքի հատվածում առկա են մկանային վնասվածքներ, իսկ ոսկրային կոտրվածքներ չկան: Աշոտն արդեն դուրս է գրվել հիվանդանոցից:

Խաղից հետո Արկադի Անդրեասյանին ոստիկանական տեղամասում հարցաքննել են: Այս դեպքի առնչությամբ ոստիկանությունը հետաքննություն է անցկացնում:

Տեղի ունեցած տհաճ միջադեպին արձագանքել են «Արարատի» երկրպագուների ակումբի անդամները, որոնք պահանջում են Արկադի Անդրեասյանի հրաժարականը:

Տաթեւ Աբրահամյանը կվիճարկի ԱՄՆ-ի չեմպիոնուհու տիտղոսը

ՖԻԴԵ-ի վարպետ Տաթեւ Աբրահամյանը շարունակեց հաջող ելույթները շախմատի ԱՄՆ-ի առաջնությունում: Նա մտել է եզրափակիչ եւ Աննա Զատոնսկիխի հետ կվիճարկի երկրի չեմպիոնուհու տիտղոսը:

Եզրափակիչի ուղեգիրը Տաթեւը նվաճեց Քամիլա Բագինսկայտեի հետ դժվարին մրցախաղում: Կիսաեզրափակիչի առաջին պարտիայում Աբրահամյանը սպիտակներով պարտություն կրեց: Թվում էր, թե նրան դժվար կլինի սեւերով հետ բերել կորցրածը: Սակայն 2-rդ պարտիայում հայ շախմատիստուհին հաղթեց: Եզրափակիչի ուղեգրի բախտը վճռվեց արագ շախմատի 2 մրցախաղում: Այստեղ Տաթեւն իրեն գերազանց դրսեւորեց՝ շահելով 2 պարտիաներն էլ:

Եզրափակիչում Տաթեւի մրցակցուհին՝ Աննա Զատոնսկիխն իսկական մարզական սխրանք գործեց: Դեռեւս նախնական փուլում գրեթե անհուսալի իրավիճակում Զատոնսկիխը 2 անընդմեջ հաղթանակ տոնեց ու միավորներով հավասարվելով Սաբինա Ֆոյտորին, իրավունք ստացավ նրա հետ լրացուցիչ մրցախաղում վիճարկելու կիսաեզրափակիչի ուղեգիրը: 2 պարտիաներում էլ առավելության հասնելով մրցակցուհու նկատմամբ, Զատոնսկիխը կիսաեզրափակիչում պայքարից դուրս մղեց փորձառու Իրինա Կրուշին: Առաջին պարտիայում սպիտակներով հաղթեց Զատոնսկիխը, երկրորդում նույն գույնի խաղաքարերը հաջողություն բերեցին Կրուշին: Արագ շախմատի մրցախաղում էլ շախմատիստուհիներից յուրաքանչյուրը հաղթեց սեւ խաղաքարերով: Վճռորոշ 3-rդ պարտիայում Կրուշը խաղում էր սպիտակներով՝ իր տրամադրության տակ ունենալով 45 րոպե, իսկ Զատոնսկիխը սեւերով մտածելու համար 27 րոպե ուներ: Սակայն ոչ-ոքիի դեպքում հաղթող էր ճանաչվելու սեւերով խաղացող Զատոնսկիխը: Բայց նա առանց մրցակարգի այդ կետի օգնության ինքնուրույն լուծեց եզրափակիչ մտնելու հարցը՝ 35-rդ քայլին սպիտելով Կրուշին հանձնվել:

Տղամարդկանց եզրափակիչում ԱՄՆ-ի չեմպիոնի տիտղոսը կվիճարկեն Գասա Կամսկին եւ Յուրի Շուլմանը: Կիսաեզրափակիչում Կամսկին 1,5-0,5 հաշվով պարտության մատնեց Սեմ Շենկլենդին: Իսկ ահա Շուլմանին Ռոբերտ Հեսի նկատմամբ առավելության հասնելու համար պահանջվեց լրացուցիչ մրցախաղ: Կիսաեզրափակիչում դասական շախմատի 2 պարտիաներն էլ ավարտվեցին ոչ-ոքի: Իսկ լրացուցիչ մրցախաղում Շուլմանը մրցակցին հաղթեց 1,5-0,5 հաշվով:

Պատանիները սկսեցին պարտությամբ

Հայաստանի ֆուտբոլի մինչեւ 17 տարեկանների պատանեկան հավաքականը պարտությամբ սկսեց Ղազախստանի նախագահի գավաթի խաղարկությունը՝ 3-5 հաշվով զիջելով վրացիներին: 4-rդ րոպեին հաշիվը բացեց Վարդան Բակալյանը, սակայն հետագայում վրացիները 5 գոլ խփեցին: Մինչեւ խաղավերջ Էդգար Հարությունյանն ու Համլետ Ասոյանը կրճատեցին հաշիվը: 1-ին խմբում կայացած մյուս խաղում Ուկրաինայի ընտրանին 2-1 հաշվով հաղթեց թուրքերին: Այսօր մեր պատանիները մրցելու են ուկրաինացիների հետ:

Էջը պատրաստեց **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

Օրվա հետքերով

Orange-ի բաժանորդներից մեկը կդառնա Կաննի կինոփառատոնի պատվավոր հյուր

Երեւան, 26 ապրիլի, 2011թ.: Այսօր Orange-ը հայտարարեց Orange Կինո ծառայության սիրահարներին ուղղված բացառիկ առաջարկի մասին: Orange-ի ձայնային ծառայությունների բոլոր բաժանորդները, այսօրվանից մինչեւ մայիսի 8-ը օգտվելով Orange Կինո ծառայությունից, կստանան հնարավորություն ձեռք բերելու Կաննի միջազգային կինոփառատոնին որպես պատվավոր հյուր մասնակցելու ուղեգիր:

«Արդեն ավելի քան 10 տարի Orange-ը Կաննի միջազգային կինոփառատոնի պաշտոնական գործընկերներից է, եւ այս ավանդական գործընկերության շնորհիվ Orange Արմենիան հնարավորություն ունի իր բաժանորդներից մեկի համար անմոռանալի դարձնելու Կաննի 64-րդ փառատոնը: Հայաստանում մենք երկու ամիս առաջ մեկնարկեցինք Orange Կինո ծառայությունը, որի նպատակն է աշխուժացնել կինոյի նկատմամբ հետաքրքրությունը Հայաստանում եւ խրախուսել կինոմաններին: Հենց մեր այս բաժանորդներն էլ, ովքեր հաճախ են այցելում կինո, կստանան հնարավորություն՝ դառնալու Կաննի աստղերից», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն Բրունո Դյութուան:

Ցանկալի ուղեգիրը ձեռք բերելու համար պարզապես անհրաժեշտ է օգտվել Orange Կինո ծառայությունից ապրիլի 26-ից մինչեւ մայիսի 8-ը, Orange համարից ուղարկելով kino բառը 5555 կարճ համարին: Տոմսի հետեւում նշված համապատասխան դաշտում լրացնելով պահանջվող տվյալները՝ բաժանորդները պետք է կտրեն տոմսի սնորին՝ լրացված հասվածը եւ գցեն «Մոսկվա» եւ «Հոկտեմբեր» կինոթատրոններում տեղադրված Orange-ի համապատասխան արկղերը: Մայիսի 10-ին երկու արկղերը կբացվեն, եւ պատահական կարգով դուրս կհանվի մեկ տոմս: Այն երջանիկ բաժանորդը, ում պատկանում է այդ տոմսը, կստանա Կաննի պատվավոր հյուրի ուղեգիր 2 հոգու համար:

«Կարծում եմ՝ ամեն մի կինոսիրողի երազանքներից է հայտնվել Կաննի նման հեղինակավոր միջազգային կինոփառատոնում, որտեղ իր շուրջը կլինեն համաշխարհային կինոաստղեր՝ կենդանի լեգենդներ: Orange-ի հետ երազանքներն իրականություն են դառնում: Մեր բաժանորդին Կաննում կընդունեն իսկական աստղի նման: Իսկ քանի որ կինո մեր բաժանորդները մենակ չեն գնում, երջանիկ հաղթողը կընտրի, թե ում հետ է գնալու, այս անգամ արդեն Կան», հավելեց Orange-ի մարկետինգի տնօրեն Արամ Մկրտչյանը:

«Շարունակել դատական ֆարսը»

Արդարադատության նախարարությանն է դիմել կառուցապատողից դժգոհ բնակիչը

«ԱՎՈ ՖՀՄ» կառուցապատող ընկերության դեմ բողոք ներկայացնող Նալբանդյան 5, տուն 6 հասցեի սեփականատեր Մարինե Ղազարյանի դժգոհության մասին՝ պայմանավորված նորակառույց Նալբանդյան 7 շենքում ստացած բնակարանում շինարարական նորմերի խախտումներով, մեր թերթում արդեն անդրադարձել ենք: Այդ կապակցությամբ բնակիչը դատական հայց էր ներկայացրել: Դատավոր Խանդանյանն էլ, Մարինե Ղազարյանի ներկայացմամբ, դատական գործընթացում անհիմն մեղադրանքներ է ներկայացրել իր դեմ, ձգտելով «մեղադրողի կարգավիճակից մեզ մեղադրյալ դարձնել», այնուհետեւ պատասխանող կողմի միջնորդությամբ ինքնաբացարկ է հայտարարել: Մարին Ղազարյանը դիմել է արդարադատության նախարարությանը՝ կոչ անելով հսկողության տակ առնել այս դատական գործընթացը, որպեսզի «Խանդանյանի իրավահաջորդ դատավորները չշարունակեն արդեն 1 տարի 2 ամիս շարունակվող դատական ֆարսը»:

Ա. Մ.

Գեորգի Յարալյանի ընտանիքին

Սգակիր բարեկամներ,

Ընդունեցեք իմ խորազգաց վշտակցությունը հայտնի երգիծանկարիչ, Հայաստանի վաստակավոր նկարիչ Գեորգի Յարալյանի մահվան կապակցությամբ:

Դիպուկ է նկատված՝ մահը, դժբախտություն լինելով հանդերձ, իր հետ բերում է կորցրած արժեքի գիտակցություն: Մեծ գեղագետի բովանդակ ստեղծագործության եւ մարդկային նկարագրի համար այս միտքը թերեւս մեծագույն սփոփանք է: Լո՛ւյս նրա պայծառ հիշատակին:

Ցավակցաբար՝

Բաֆֆի Կ. Հովհաննիսյան

www.azg.am

Կորել է

Խաչատուր Տիգրանի Դարբինյանի անձնագիրը AA 0231924, 012.30.06.95 եւ վարորդական իրավունքը:

Գտնողին խնդրում եմ զանգահարել 091-52-85-64:

Տեղադրեք եւ ընթերցեք անվճար հայտարարություններ www.webstand.am կայքում

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ս.թ. մայիսի 24-ին, ժամը 14.00-ին, Շիրակի մարզպետարանում (ք. Գյումրի) տեղի կունենան Հայաստանի նոր միջուկային էներգաբլոկի բնապահպանական (շրջակա միջավայրի վրա ազդեցության) հաշվետվության հասարակական լսումները:

Հայաստանի նոր միջուկային էներգաբլոկի բնապահպանական (շրջակա միջավայրի ազդեցության) հաշվետվությանը մանրամասն կարելի է ծանոթանալ ՀՀ բնապահպանության նախարարության՝ www.mnp.am եւ ՀՀ էներգետիկայի եւ բնապահպանության նախարարության՝ www.minenergy.am կայքերից, ինչպես նաեւ զանգահարելով ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության աշխատակազմի ատոմային էներգետիկայի վարչություն՝ հեռ.՝ 523 447, 528 243 եւ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ, հեռ.՝ 221 485:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՊԳԿՎ-ՔՇՁԲ-2011/1

Պատվիրատու՝ ՀՀ Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը (ՀՀ ԿԱ ՊԳԿՎ), որը գտնվում է ք. Երեւան, Տիգրան Մեծի 4 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգով գնում:

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ ԿԱ ՊԳԿՎ կարիքների համար քարտեզագրության հետ կապված ծառայությունների ձեռքբերումը:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԳԿՎ՝ ք. Երեւան, Տիգրան Մեծի 4 հասցեով, 36 աշխատասենյակ, մինչ 02.05.2011թ. ժամը 15:00-ն ներառյալ, հայերեն լեզվով:

Պարզեցված ընթացակարգի հրավերի մասին այլ տեղեկություններ կարող եք ստանալ gnumner.am ինտերնետային կայքից կամ դիմելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն՝ ք. Երեւան, Տիգրան Մեծի 4, 4-րդ հարկ, հաշվապահական հաշվառման ֆինանսական հաշվետվությունների բաժին, հեռախոս 58 35 40:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ԿԲ խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը ապրիլի 26-ի նիստում, որը վարում էր ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանը, հաստատեց ՀՀ կենտրոնական բանկի 2010 թ. «Տարեկան հաշվետվությունը»:

Խորհրդի որոշմամբ «ՖԱՍՏ-ԿՐԵԴԻՏ» ՍՊԸ-ին գրավատան կազմակերպման լիցենզիա տրամադրվեց, վերաձեւակերպվեց «ՌԱՍԿՈ» ապահովագրական ՍՊԸ-ին լիցենզիան եւ նոր դասերով լիցենզիա տրամադրվեց:

Ուժը կորցրած ճանաչվեց Աթանես Աթանեսյանին տրամադրված արտարժույթի առուվաճառքի թիվ 261 լիցենզիան, «ԱԿԲԱ ԲՐՈԿ» ՍՊԸ ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզիան, «ԳՈԼԴԵՆ ՖՅՈՒՉԵՐ» ՍՊԸ-ի գրավատան կազմակերպման թիվ ԳԳ-Ե 140 լիցենզիան, իսկ «ԽԱՎ» ՍՊԸ-ի գրավատան կազմակերպման ԳԳ-Ե 194 լիցենզիայի գործողությունը դադարեցվեց:

ՀԱՇՎԵԿՇԻՌ

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿ

(«Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման եւ վճարման կարգի մասին» հրահանգի հավելված)

Հարկ վճարողի անվանումը «Կալա Սլոտ» ՍՊԸ ՇԽ 168 28.08.2008թ.

ՀՎՀՀ 0 1 8 4 3 6 2 3

Հաշվետու տարի 2 0 1 0

Տուցանիշները հաշվետու տարվա համար	Տողը	Գումարը
Ծառայությունների մատուցումից հասույթը	0103	8449
Ընդամենը համախառն եկամուտը՝ եկամուտների հանրագումարը (0101-ից 0120 տողերի հանրագումարը)	0100	8449
-այդ թվում հաստատագրված վճարով հարկվող գործունեության մասով	0100Ա	8449
գործունեության հետ կապված վարչական ծախսերը	0206	(10343)
Ընդամենը համախառն եկամտից նվազեցվող ժամանակաշրջանի ծախսերը (տող 0206+տող 0207+տող0208+0209)	0210	(10343)
Ընդամենը համախառն եկամտից նվազեցվող ծախսերը տող 0205+տող 0210	0220	(10343)
Ընդամենը համախառն եկամտից նվազեցումները (տող 0220+տող 0230+տող0240)	0200	(10343)
-այդ թվում՝ հաստատագրված վճարովի հարկվող գործունեության մասով	0200Ա	(10343)

Ակտիվների եւ պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքները եւ հարկային բազաները (հաշվետու տարվա վերջում)

N	Ակտիվ/Պարտավորություն	Հաշվապահական հաշվեկշռային արժեք	Հարկային բազա
1	2	3	4
1	Ոչ նյութական ակտիվներ	3333	3333
2	Դրամական միջոցներ	50	50
3	Ընդամենը ակտիվներ (տող1+...+ տող 19)	3388	3388
4	Ստացված կանխավճարներ	8864	8864
5	Կրեդիտորական պարտքեր բյուջեներ	1000	1000
6	Կրեդիտորական պարտքեր սոցիալական վճարների մասով	44	44
7	Կանոնադրական կապիտալի համալրված մասը	(6520)	(6520)
8	Ընդամենը պարտավորություններ (տող 21+...+տող 29)	3388	3388

Տնօրեն

Հարկ վճարողի կնիքը

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ *Ձեւ N 1*

31/12/10 թ.

Կազմակերպության անվանումը	«Բեթոլանեթ» բուսմեյքերական ընկերություն» ՍՊԸ	
Պետական ռեգիստրում գրանցման համարը		27311003820
Հարկ վճարողի հաշվառման համարը		01550331
Ցափի միավորը		Մեկ հազար ՀՀ դրամ
Գտնվելու վայրը	Տիգրան Մեծի 36,9	հեռախոսը 569-769
Փաստացի գործունեության իրականացման վայրը	Տիգրան Մեծի 36,9	

Ենթարկված է աուդիտի «Էկոնոմիկս» Աուդիտի՝ ՍՊԸ կողմից Լիցենզիա 085 տնօրեն/աուդիտոր Հ. Դանիելյան

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	010	74	-
Ոչ նյութական ակտիվներ	030	88,220	88,220
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	88,294	88,220
II. Ընթացիկ ակտիվներ			
Նյութեր	090	140	-
Տրված ընթացիկ կանխավճարներ	150	15	39
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170	488	813
Այլ դեբիտորական պարտքեր	180	-	2,202
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200	40,413	54,027
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	41,056	57,081
Հաշվեկշիռ	230	129,350	145,301

ՊԱՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի զուտ գումար	240	80.000	80.000
Կուտակված շահույթ	270	18,828	37,813
Ընդամենը սեփական կապիտալ	300	98,828	117,813
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	390	265	614
Ստացված ընթացիկ կանխավճարներ	400	16,116	11,568
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	5,436	923
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական	420	1,566	2,051
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ	430	6,378	8,472
Այլ կրեդիտորական պարտքեր	450	760	3,860
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	30,521	27,488
Հաշվեկշիռ	500	129,349	145,301

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ *Ձեւ N 2*

01/01/10-31/12/10

Տուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)
1	2	3	4
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	2,793,752	2,910,083
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	020	(2,509,218)	(2,470,437)
Համախառն շահույթ (վնաս)	030	284,534	439,646
Վարչական ծախսեր	050	(271,309)	(401,184)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	13,225	38,462
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝	070	-	58
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝	080	(2,032)	(1,532)
Գործառնական շահույթ (վնաս)	090	11,193	36,988
Ֆինանսական ծախսեր	100	(287)	-
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝	130	20	(3)
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	10,926	36,985
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	160	10,926	36,985
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	170	(771)	-
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	10,155	36,985

Ղեկավար՝ Գլխավոր հաշվապահ՝ **Բաղյան Վանյա**

Մկրտչյան Արամյա

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԲԵԹՈԼԱՆԵԹ» ԲՈՒՔՄԵՅՔԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ

2010 թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտի

Մենք աուդիտի ենթարկել «ԲԵԹՈԼԱՆԵԹ» ԲՈՒՔՄԵՅՔԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ի 2010 թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները: Աուդիտը ներառում է ընկերության հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 1-ը հունվարի 2011 թ., ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալի, դրամական հոսքերի մասին հաշվետվությունները: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Աուդիտը մեր կողմից իրականացվել է աուդիտորական գործունեության վերաբերյալ ՀՀ օրենսդրության, ՀՀ օրենքների, այլ իրավական ակտերի, աուդիտի սանդարտների եւ գործնական փորձի համապատասխան: Աուդիտի սանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Մեր կողմից աուդիտի է ենթարկվել ընկերության 2010 թ. գործունեությունը հաստատող այն հաշվապահական հաշվառման սկզբունքային փաստաթղթերի հաշվեմնումն ու համապատասխան ձեւակերպումների ճշտությունը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվությունների տվյալները: Մենք գտնում ենք, որ մեր կողմից անցկացված աուդիտը բավարար հիմք է տալիս հետեւյալ եզրահանգման համար:

Մեր կարծիքով «ԲԵԹՈԼԱՆԵԹ» ԲՈՒՔՄԵՅՔԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ 2010 թ.-ի տարեկան ֆինանսական հաշվետվություններում չկան էական խախտումներ, բոլոր էական առումներով, տալիս են ընկերության 2010 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշռի եւ նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների մասին՝ ճշմարիտ ու իրական պատկերը:

«Էկոնոմիկս Աուդիտ» ՍՊԸ տնօրեն/աուդիտոր (աուդիտորի որակավորման վկայական թիվ 068) 11 ապրիլի 2011 թ.

Հ. Դանիելյան

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:

Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 27.4.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: